Թեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում արևային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Լրամշակված

Ձեռնարկող՝ «ԳՐԻՆ ԷՆԵՐԳԻԱ ԷՆՈՐ

Մշակող՝ «ՆՈՎԱԼ»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ընդհանուր տեղեկատվություն----------էջ 4
2. Հավելվածներ----------էջ 4
3. Օգտագործվող հապավումներ----------էջ 5
4.Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ կազմման իրավական հիմքերը----------էջ 5-9
5.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացների վերաբերյալ----------էջ 10
6.Գործընթացի մասնակիցներ ----------էջ 11
7.Նախատեսվող գործունեության բնութագրերը----------էջ 12
7.1 Տեխնիկական լուծումներ----------էջ 14
7.2 Ցանկապատում----------էջ 15
7.3 Լուսավորություն----------էջ 15
7.4 Անվտանգություն----------էջ 15
8.Նախատեսվող գործունեության տարածքի, ներառյալ հարակից տարածքների Նկարագիրը----------էջ 16
9.Շջակա միջավայրի բնութագրերը----------էջ 22
9.1 Օդային ավազան, կլիմա----------էջ 22
9.2 Հողային ռեսուրսներ----------էջ 25
9.3 Ջրային ռեսուրսներ----------էջ 26
9.4 Կենսաբազմազանություն----------էջ 27
9.5 Հատուկ պահպանվող տարածքներ----------էջ 31
9.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ----------էջ 31
9.7Բնության հուշարձաններ----------էջ 34
10.Տարածքի սոցիալ-տնտեսական բնութագիրը----------էջ 34
11.Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը----------էջ 35
12.Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատում----------էջ 36
13.Բնական ռեսուրսների, օգտագործվող հումքի ու նյութերի նկարագրությունը----------էջ 37
14.Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը /շինարարության և շահագործման փուլ/----------էջ 38
14.1 Օդային ավազան----------էջ 39
14.2 Հողային ռեսուրսներ----------էջ 40
14.3 Ջրային ռեսուրսներ----------էջ 40
14.4 Կենսաբազմազանություն----------էջ 40
14.5Թափոններ----------էջ 41
14.6.Սոցիալական ազդեցություն----------էջ 41
14.7Աղմուկ և թրթռում----------էջ 43

14.8 Էլեկտրական և մագնիսական դաշտ----------էջ 43
14.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ----------էջ 43
14.10 Լուսավորություն և ջեռուցում----------էջ 44
14.11 Բարեկարգում----------էջ 44
14.12 Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն----------էջ 44
14.13 Մարդու առողջություն և անվտանգություն----------էջ 44
14.14 Գումարային ազդեցություններ----------էջ 45
15. Շինարարության փուլի ժամանակացույցը----------էջ 45
16. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը-----էջ 47
16.1 Շինարարության փուլ
16.1.1 Օդային ավազան----------էջ 47
16.1.2 Հողային ռեսուրսներ----------էջ 47
16.1.3 Ջրային ռեսուրսներ ----------էջ 48
16.1.4 . Կենսաբազմազնություն----------էջ 48
16.1.5 Թափոններ----------էջ 48
16.1.6 Աղմուկ և թրթռում----------էջ 49
16.1.7 Արտակարգ իրավիճակներ----------էջ 49
16.1.8 Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի անվտանգություն----------էջ 49
16.1.9 Բարեկարգում----------էջ 50
16.2 Շահագործման փուլ----------էջ 50
16.2.1 Ջրային ռեսուրսներ----------էջ 50
16.2.2 Հողային ռեսուրսներ----------էջ 50
16.2.3 Թափոններ----------էջ 50
16.3 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն----------էջ 51
17.Փակման փուլ----------էջ 52
18. Բնապահպանական միջոցառումների կառավարման և մոնիթորինգի պլան----էջ 53
19. Հետնախագծային վերլուծություն ----------էջ 68
20. Հանրային ծանուցում և քննարկումներ----------էջ 68
21. Եզրահանգում----------էջ 68
Գրականություն----------էջ 69

1.Ընդհանուր տեղեկատվություն

ՇՄԱԳ հաշվետվություն	Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում
Ձեռնարկող	«Գրին Էներջի» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Երևան, Սիլիկյան թ.4–րդ փողոց, տուն 9-ը
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածք
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	հեռ. +374 44 444450 greenenergyarm@gmail.com
Պատվիրատու	«Փաուեր էներջի» ՍՊԸ
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայ
Աշխատանքային նախագծի մշակող	«Դի-Էներջի» ՍՊԸ
Գնահատման հայտի նախագծող	«Նովալ»ՍՊԸ
ՇՄԱԳ հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Բրյուսովի 6 (012)21-10-01, (093)39-77-60 noval-llc@@outlook.com

Հավելվածներ

Հավելված 1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքը

Հավելված 2. Հողի անալիզի եզրակացությունը: Հողանմուշի լաբորատոր փորձաքննության արդյունքները

Հավելված 3. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը

Հավելված 4 . Ճարտարապետահատակագծային առաջադրանք

Հավելված 5. Շողակաթ համայնքապետարանի նախնական համաձայնությունը

Հավելված 6.Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկ

Հավելված 7. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատման հաշվարկները

Հավելված 8. Օդային ավազանի աղտոտման հաշվարկները շինարարության փուլում
Հավելված 9. Հողային հանույթի հաշվարկ

3. Օգտագործվող հապավումները

ՇՄՆ՝ շրջակա միջավայրի նախարարություն

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՕԳ՝ օդային գիծ

ԲՀՊՏ՝ բնության հատուկ պահպանվող տարածք

ԷՍՆԸՊ՝ էլեկտրականության սանիտարական նորմեր և ընդհանուր պահանջներ

ՏԿ՝ տեխնիկական կանոնակարգ

ԲՍ՝ բաշխիչ սարք

ԲԲՍ՝ բաց բաշխիչ սարք

ՍՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ԿՎտ՝ կիլովատտ

ԿՎԱ՝ կիլովոլտ-ամպեր

ԳՎտ՝ գեգավատտ

ԱՖԷԿ՝ արևային ֆոտովոլտային էլեկտրոկայան

ՀԷՑ՝ Հայկական էլեկտրական ցանցեր

Գմ՝ գծամետր

ԳՑՓԿ՝ գծային ցանցային փոխակերպիչ

ԱՀԿՈՒ՝ առավելագույն հզորության կետի ուրվակ

4. ՇՄԱԳ-ի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)–կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, փորձաքննվում են ՇՄԱԳ հաշվետվությունը և կից ներկայացված

նախագծային փաստաթղթերը, որից հետո տրվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)–կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի

պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպահիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման եվ պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը-(15.05.2001թ.)-կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006 թ.) - կարգավորում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է

պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

Էներգետիկայի մասին ՀՀ Օրենք – 2001թ. կարգավորում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և սահմանում է դրանց իրագործման մեխանիզմները:

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)– Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ կառավարության որոշումներ

- **ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝** «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
- **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «**ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշ**ում՝**«**ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

- **ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում՝**«ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- **ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝«**Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- **ՀՀ կառավարության 08.11.2011թ. N1396 որոշում՝«**Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին»:
- **ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում՝**«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»:
- **ՀՀկառավարության 18 01. 2007 թվականի N 205-Ն որոշում՝ «**ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2007-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ (ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ) հաստատման մասին:
- **ՀՀ կառավարության 25 հուլիսի 2019 թվականի N 947-Ն որոշում՝«**ՀՀ կառավարության 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 927-Ն ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 205-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:
- **ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշում՝ «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2007-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ (ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ) ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:**

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.		
2	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո,1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
3	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք,1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
4	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
5	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
	Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
6	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
7	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
8	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
9	«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
	«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
10	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս1998թ.)	2001	1998	2001	

5.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացները

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի, գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ: Արևային կայանի հետ կապված գործունեությունը ներառված է Գ կատեգորիայի մեջ, եթե կայանի զբաղեցրած տարածքը լինի 40 հա և ավելի: «Գրին Էներջի» արևային կայանը

զբաղեցնում է 9.68364 հա տարածք և համաձայն Օրենքի ենթակա չէ ՇՄԱԳ-ի և փորձաքննության: Միաժամանակ համաձայն Օրենքի՝ փորձաքննության ենթակա է բարձրավոլտ օդային գծերի (ՕԳ)կառուցումը՝ 110կՎ և ավել հզորության: Օդային գծի կառուցումը ենթակա է փորձաքննության ՝«Բ» կատեգորիայի ընթացակարգով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ արևային կայանը բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծին միանալու է մինչև 30 մ երկարությամբ էլեկտրահաղորդման գծով, ուստի նախատեսվող գործունեությունը դասվում է «Բ» կատեգորիայի՝ համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի գ. ենթակետի:

Հայտի փորձաքննության արդյունքում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 12.03 2021թ. նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտին տրամադրվել է տեխնիկական առաջադրանք (ՏԱ- 37) (Հավելված 1):

Օրենքով սահմանված կարգով՝ տեխնիկական առաջադրանքի հիման վրա իրականացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթաց, կազմվել է սույն ՇՄԱԳ հաշվետվությունը:

6.Գործընթացի մասնակիցները

Ձեռնարկող՝ «ԳՐԻՆ ԷՆԵՐՁԻ» ՍՊ ընկերության իրավաբանական հասցեն է՝ Երևան, Սիլիկյան թ.,4 փողոց, տուն 9: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020թ.փետրվարի 5-ի, 19Ա որոշման համաձայն՝«ԳՐԻՆ ԷՆԵՐՁԻ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է 5ՄՎտ հզորությամբ ԼԷ№0665 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2041թ.դեկտեմբերի 27-ը գործողության ժամկետով: Այն տեղակայվելու է Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում՝ «ԳՐԻՆ ԷՆԵՐՁԻ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում:

Կապալառու՝ «ՓԱՈՒԵՐ ԷՆԵՐՁԻ» ՍՊԸ Կայանը կառուցվելու է համապատասխան մրցույթով ընտրված շինարարական կապալառուն :

Կայանը կառուցողը ընկերությունը պատասխանատու է նաև բնապահպանական կառավարման համար, որը ներառում է՝

- համապատասխան օրենքների, կանոնակարգերի և ստանդարտների պահանջների ապահովում,
- անհրաժեշտ թույլտվությունների և / կամ համաձայնությունների ձեռք բերում,
- մեղմացնող միջոցառումների իրականացում՝ շինարարական փուլի ազդեցությունները նվազեցնելու համար,
- բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների իրականացման ապահովում,
- առողջության և անվտանգության պահանջների ապահովում:

Շրջակա միջավայրի նախարարություն

Շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով: Նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարման հիմնարկ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 8 օգոստոսի 2002 թվականի N 1237-Ն որոշմամբ:

ՇՄՆ իրականացնում է գործառույթներ առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

- Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ կողմից, գործընթացում ներգրավվում են նաև ՇՄՆ-ի առանձնացված ստորաբաժանումները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Նախարարության կարևորագույն գործառույթներից են նաև.

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառների պահպանման ու զարգացման ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, մրցունակության ապահովման, հասարակական առաջընթացի և երկրի անվտանգության բացառիկ կարևոր գործոն.
- մշակույթի զարգացմանը նպաստելը.
- մշակութային ժառանգության ստեղծմանը, պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահռչակմանը նպաստելը:

Նախարարությունը գործընթացին կարող է մասնակցել նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային արժեքների կամ հնագիտական շերտերի առկայության կամ հայտնաբերման դեպքում:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Նախարարությունը մշակում և իրականացնում է նաև ՀՀ կառավարության քաղաքականությունը, էներգետիկայի եւ բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ)

Սահմանում է արևային կայանի շինարարության և շահագործման պայմանները՝ ամրագրվում են Էներգիայի արտադրության լիցենզիայով: Ըստ ՀՀ օրենսդրության՝ ՀԾԿՀ էներգիա արտադրող կազմակերպությանը տրամադրում է Էներգիայի արտադրության լիցենզիա համաձայն ՀԾԿՀ 1.11.2013 թ. N374 որոշման:

Առողջապահության նախարարություն

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը: Նախարարության կազմում գործում են.

<u>Աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումները.</u>

- Առողջապահական ծրագրերի և որակի կառավարման վարչություն
- Մոր և մանկան առողջության պահպանման վարչություն
- ՀՀ ԱՆ պետական առողջապահական գործակալություն
- ՀՀ ԱՆ հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն

Այս տեսչությունը իրականացնում է բնակչության առողջության հետ կապված խնդիրների վերահսկողությունը:

Արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հ**այաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին»** 2018 թվականի հունիսի 11-ի ՀՀ վարչապետի **N 740-L որոշմամբ:**

Շողակաթ համայնք, շահագրգիռ հանրություն:

Շողակաթ համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզում: Ներառում է Աղբերք, Շորժա, Արտանիշ, Դրախտիկ, Ծափաթաղ, և Ձիլ գյուղերը: Համայնքը ստեղծվել է 2017 թվականի հունիսի 9 -ին ՀՀ Ազգային Ժողովում համայնքների խոշորացման օրինագծով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի, ՀՀ կառավարության 1325-Ն որոշման՝ Շողակաթ համայնքում իրականացվելու են չորս փուլով հանրային քննարկումներ, որոնցից երեքն արդեն իրականացվել են համայնքում, նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրությունը դրական է արտահայտվել:

7. Նախատեսվող գործունեության բնութագրերը

Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ (1մ^2 հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կվտժ/մ^2, իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կՎտժ/մ^2 ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներով):

Հայաստանի Հանրապետության արևային ներուժը բավարար է արևային կայանների շինարարության համար: Ներկայացվում են ուղղակի նորմալ ճառագայթման և գլոբալ հորիզոնական ճառագայթման ներուժի քարտեզները:

Նկար 1



Նկար 2.



Նախատեսվող «Գրին էներջի» արևային կայանի նպատակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է: «Գրին էներջի» ՍՊ ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառքը երկարաժամկետ ժամանակահատվածում: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:

Նախագծի իրականացման նպատակներն են.

- ապահովել Հանրապետության էներգամատակարարման հեռանկարային պահանջարկը,
- պահպանել և բարելավել այլընտրանքային էլեկտրաէներգիայի արտադրությունը,
- էլեկտրաէներգիայի արտադրությունում ներդնել նոր էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիա:

Կայանը տեղակայված է լինելու «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին պատկանող հողատարածքում՝ Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք, գ. Շողակաթ (մինչև 2017թ. կոչվել է Շորժա) բնակավայրի տարածքում՝ 19-րդ փողոց 12 հողամասում: Այն զբաղեցնելու է 9.68364 հա տարածք:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի: Արևային կայանի տեղաբաշխման վայրը որոշված է հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ, հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում առկա ենթակառուցվածքները, մասնավորապես հարևանությամբ գտնվող բարձր լարման էլեկտրական հաղորդալարերը:

7.1 Տեխնիկական լուծումներ: Նախագծման փուլում տեխնիկական լուծումներում կատարվել են որոշակի լրացումներ և ճշգրտումներ:

ԱՖԷԿ-ը կազմված է 5876 հատ 525Վտ հզորությամբ և 5824 հատ 520Վտ հզորությամբ միաբյուրեղային, երկերեսանի ֆոտովոլտային վահանակներից (չափերը 2274x1134x35մմ):N1-ից N12 ԳՑՓԿ-ների և N13 ԳՑՓԿ-ի 1-ից 5-րդ ԱՀԿՈՒ-երը մոնտաժվում են 525Վտ հզորությամբ վահանակներով: Իսկ N13 ԳՑՓԿ-ի 6-ից 9-րդ ԱՀԿՈՒ-երը և N14-ից N25 ԳՑՓԿ-ները մոնտաժվում են 520Վտ հզորությամբ վահանակներով:

Ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են հենակառուցվածքի (կրող կոնստրուկցիա) վրա՝ ուղղահայաց դիրքով և հորիզոնի նկատմամբ 30° անկյան տակ: Հենակառուցվածքը կառուցվում է ցինկապատ պողպատից: Հիմնասյուների ամրակցումը իրականացվում է բետոնային հիմքերի մեջ: Նախատեսվում է երկու տեսակի հենակառուցվածք՝ 52 և 26 հատ վահանակների համար:

ԱՖԷԿ-ը բաղկացած է 25 էլեկտրաէներգետիկ բլոկներից, որոնցից յուրաքանչյուրին էլեկտրականապես միացվում է մեկական փոխակերպիչ: Բոլոր փոխակերպիչներն ունեն 200 կՎտ նոմինալ ելքային հզորություն, որոնց միանում են 18 ֆոտովոլտային խմբեր, յուրաքանչյուր խմբում՝ հաջորդաբար մոնտաժված 26 վահանակ: Փոխակերպիչները ցանցային (On-Grid) տեսակի են, ելքում ապահովում են 0,8 կՎ եռաֆազ փոփոխական հոսանք: Մուտքում ունեն նախագծով նախատեսված բավարար լարման միջակայք ու հոսանքի ուժի մեծություն:

Հաստատուն հոսանքի մալուխները պետք է ունենան մինչև 2000Վ թողունակություն, իսկ մեկուսացման դիմադրությունը 1000ՄՕհմ/կմ և ավելի: Հաստատուն հոսանքի մալուխներն անցնում են հենակառուցվածքով, իսկ շարքից շարք խրամուղու մեջ տեղադրված ՊՎՔ ծալքախողովակներով:

Փոփոխական հոսանքի մալուխները հաշվարկի համաձայն պետք է լինեն АВБбШв 3x95մմ^2: Փոփոխական հոսանքի մալուխները պետք է ունենան մինչև 1000Վ թողունակություն: Տեղադրվում են գետնից 0.7մ խորության վրա, ավազե լցվածքով խրամուղու մեջ: Մալուխներից 250մմ վերև տեղադրվում է ազդանշանային ժապավեն: Մալուխի թեքման կորի ներքին շառավիղը պետք է լինի ոչ պակաս, քան մալուխի տրամագծի 10-ապատիկը: Փոխակերպիչի հողանցման ջիղը վերցնել ամենամոտ գտնվող հողանցման կոնտուրի կետից:

Հողանցման կոնտուրն իրականացվում է հողի շերտից 0.5մ խորությամբ անցկացված 4x40մմ շերտապողպատով և 2,5մ երկարություն ունեցող 50x50x5մմ պողպատե

անկյունակներով: Որպես հողանցիչ ընտրված է 4x40մմ շերտապողպատ, որը հողանցման կոնտուրին միանում է եռակցումով, իսկ հենակառուցվածքին՝ հեղույս-մանեկով: Եռակցումից հետո միացման կցվանքների ստորգետնյա հատվածները պետք է ծածկվեն բիտումային լաքով, իսկ վերգետնյա հատվածները՝ ներկվեն: Եռակցման կարի երկարությունը պետք է լինի շերտապողպատի լայնությունից կրկնակի անգամ երկար: Հողանցման կոնտուրի դիմադրությունը չպետք է գերազանցի 4 Օհմը՝տարվա ցանկացած եղանակին: Հակառակ դեպքում ավելացնել էլեկտրոդներ: ԱՖԷԿ-ի բոլոր հենակառուցվածքները, կերպափոխիչները, մետաղական արկղերը հողանցվում են: Նախատեսվում է ԱՖԷԿ-ի տարածքի ցանկապատում, արտաքին լուսավորության ցանցի և տեսանկարահանող սարքերի տեղադրում: ԱՖԷԿ-ը էլեկտրաէներգետիկական համակարգին միանալու է նոր կառուցվող սեփական տրանսֆորմատորային 110/0,8/0,8 կՎ 6300կՎԱ հզորությամբ ենթակայանի միջոցով: ԱՖԷԿ-ի տարածքով է անցնում Արեգունի 110 կՎ օդային գիծը, որին էլ միանում է 110/0,8/0,8 կՎ ենթակայանը: Տրանսֆորմատորային ենթակայանից դեպի «Արեգունի» 110կՎ գծի 21-րդ հենարանի միացումն իրականացվելու է 30մ երկարությամբ 110կՎ օդային գիծ կառուցելով:

ԱՖԷԿ-ի միացումը ցանցին համապատասխանեցվում է ՀԷՑ-ի կողմից կիրառվող տեխնիկական, նախագծման ու շահագործման չափանիշներին ու ստանդարտներին:

7.2 Ցանկապատում. Նախատեսվում է արևային կայանի ցանկապատում՝ 1410 գմ երկարությամբ, 2մ բարձրությամբ մետաղացանցով, որի համար փորվելու են 0,35մ տրամագծով և 0,6մ խորությամբ փոսեր: Պարսպապատման համար գետնի մակերևույթից 0,5մ խորության վրա տեղադրվելու են թվով 429 հատ սյուներ՝ 60,3մմ տրամագծով կլոր հատումով պողպատյա խողովակներ:

7.3 Լուսավորության տեխնիկական լուծումներ. կայանի լուսավորության համար տեղադրվելու են 48 հատ 89մմ տրամագծով կլոր հատումով պողպատյա խողովակներ՝ 6մ բարձրությամբ, որոնց տեղադրման համար փորվելու են 0,5մմ տրամագծով և 1,1մ խորությամբ փոսեր: Խողովակները տեղադրվելու են գետնի մակերևույթից 1մ խորությամբ: Տարածքի լուսավորությունն իրականացվելու է 100Վտ-ոց 4000Կ լուսադիոդային լամպերով:

7.4 Անվտանգության տեխնիկական լուծումներ. կայանում մոնիտորինգ իրականացվելու է ստորև նշվածների մրջոցով .

- ինվենտորների մեջ ներկառուցված հատուկ WiFI swich-եր
- տեսահսկման համակարգ, տեղադրվելու է 48 հատ տեսախցիկ, գիշերային տեսանելիության հնարավորությամբ,
- ենթակայանի տարածքում՝հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ, իսկ արևային կայանում՝կրակմարիչներ,
- Արևային կայանում լինելու է պահակակետ, որտեղ տեղադրվելու են անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար հեռուստացույց, մոնիտոր՝ մոնիթորինգի արդյունքներին հետևելու համար:

8. Նախատեսվող գործունեության տարածքի, ներառյալ հարակից տարածքների նկարագիրը,

Տարածքը տեղակայված է Սևանա լճի հյուսիս արևելյան մասում՝ Գեղամա լեռների ստորոտում, Սևանից 4կմ հեռավորության վրա՝ծովի մակերևույթից 2030մ բարձրության վրա: Տարածքը տեղակայված է Սևանա լճի հյուսիս արևելյան մասում՝ Գեղամա լեռների ստորոտում: Հայցվող տարածքի հյուսիսային լայնության և արևմտյան երկարության կոորդինատներն են՝ $40^0$30'45.8", $45^0$18'45.1": Տարածաշրջանում առկա է Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքը, ինչը կարող է մեծացնել տարածաշրջանի սեյսմիկ վտանգը:

Ռելիեֆը հարթ է, տեղ-տեղ՝ բլրակային: Աշխարհագրական դիրքը և ծովի մակարդակից ունեցած բարձրությունը՝ 1960-2100մ իրենց կնիքն են թողնում նաև տեղանքի ջերմաստիճանային ռեժիմի վրա: Ամենատաք ամիսը համարվում է օգոստոսը, երբ միջին տարեկան ջերմաստիճանը տատանվում է 8,8°C-ից (Եռաթմբեր) 30°C–ի (Շորժա) սահմաններում, իսկ ամենացուրտ ամիսը հունվարն է, երբ ջերմաստիճանը տատանվում է -4,6°C-ից -20°C:

Տեղանքի ուսումնասիրության համար իրականացվել է տեղագրական և երկրաբանական հետազոտություններ և չափումներ: Հետազոտությունների արդյունքները հաշվի են առնվել հողային աշխատանքների պլանավորման, կրող կոնստրուկցիաների կառուցման, բետոնային հիմքերի շինարարության իրականացման և ֆոտովոլտային խմբերի տեղաբախշման լուծումներում:

Քամու արագությունը՝ 29- 30մ/վրկ է, սառցակեղևը 15-20մմ: Ըստ որի տեղանքի համար առավելագույն ցածր ջերմաստիճանը -32° է, բարձրը՝ +34°, քամու առվելագույն արագությունը կարող է հասնել 24-28 մ/վ-ի: Օրվա մեջ առավելագույն տեղումները (ձյուն) 40 սմ է: Տարվա ընթացքում անարև օրերի քանակը 16 օր է: Տեղանքում հորիզոնական ճառագայթումը 1774 կՎտ ժ/մ^2/ է:

Սևանա լճի ավազանի տարածքում տեղումները տատանվում են 388 մմ-ից (Ծովակ) մինչև 875 մմ-ի միջև(Եռաթմբեր): Տարվա ընթացքում տեղումների ամենաշատ քանակը դիտվում է գարնանը՝ մասնավորապես մայիս ամսին, իսկ ամենաքիչ տեղումները դիտվում են ձմռանը: Գարնանային տեղումները կազմում են ողջ տարեկան տեղումների 40-45%-ը, այն դեպքում երբ ձմռանը թափվող տեղումներին բաժին է ընկնում 10-15%-ը:

Նախատեսվող գործունեության տարածքը մոտակա բնակավայրերից՝ Շողակաթ համայնքից գտնվում է 4 կմ, իսկ Արտանիշ բնակավայրից՝ 3կմ հեռավորության վրա:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները, իսկ մոտակա մակերևութային ջրային ռեսուրսը Սևանի լիճն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 4 կմ հեռավորության վրա:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում չկան բնության, պատմամշակութային հուշարձաններ: Գործունեության տարածքին ամենամոտը գտնվում է բնության հատուկ պահպանվող տարածքը «Սևան» ԱՊ-ն՝ մոտ 4կմ հեռավորության վրա:

Հարակից տարածքները գյուղատնտեսական մշակովի ցանքատարածություններ և արոտավայրեր են:

Գործունեության հարակից տարածքում ՝ մոտ 650մ հեռավորության վրա գտնվում են 2ՄՎտ հզորությամբ «Արտանիշ 1» և «Արտանիշ 2» արևային կայանները: Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ վերջինից 700-750մ երկարությամբ գրունտային ճանապարհով:

Տարածքում գերակշռում են տափաստանային, կարբոնատացված անտառային գորշ հողերը, տարածված է տարախոտային բուսականությունը:

Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են՝ պայմանավորված տարածքի արդեն մարդածին ազդեցության գոտում գտնվելու հանգամանքով:

Նախատեսվող գործունեության տարածքը մոտակա բնակավայրերից՝ Շողակաթ համայնքից գտնվում է 4 կմ, իսկ Արտանիշ բնակավայրից՝ 3կմ հեռավորության վրա:

Նկար 3.

Նկար 4.

Արևային կայանի հեռավորությունը
մոտակա մշտական հոսք ունեցող ջրային հոսքից

«Գրին Էներջի» ՍՊԸ

Նկար 5.

Նկար 6.

Իրադրության սխեմա

«Գրին Էներջի» ՍՊԸ



0 100 200 մ

Նկար 7.



Գործունեության ենթակա տարածքում բացակայում են են գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները, իսկ մոտակա մակերևութային ջրային ռեսուրսը Սևանի լիճն է:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում չկան բնության, պատմամշակութային հուշարձանները: Գործունեության տարածքին ամենամոտը գտնվում էբնության հատուկ պահպանվող տարածքը «Սևան» ԱՊ-ն՝ մոտ 4կմ հեռավորության վրա:

Մարզի տարածքով է անցնում Սոթք տանող երկաթգիծը, Ծաղկունք-Սոթք վագքուղու 141կմ երկարությամբ, որի հեռավորությունը նախատեսվող գործունեության վայրից կազմում է մոտ 698 մ, Սևանա լճից՝ մոտ 4 կմ:

Գործունեության հարակից տարածքում՝ մոտ 200մ հեռավորության վրա գտնվում են 2ՄՎտ հզորությամբ «Արտանիշ 1» և «Արտանիշ 2» արևային կայանները: Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ վերջինից 500-520մ հեռավորության վրա գտնվող գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Հարակից տարածքները գյուղատնտեսական մշակովի ցանքատարածություններ և արոտավայրեր են:

Տարածքում գերակշռում են տափաստանային, կարբոնատացված անտառային գորշ հողերը, տարածված է տարախոտային բուսականությունը:

Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են՝ պայմանավորված տարածքի արդեն մարդածին ազդեցության գոտում գտնվելու հանգամանքով:

9. Շրջակա միջավայրի բնութագրերը

9.1. Օդային ավազան, Կլիմա: Մարզի օդային ավազանը գտնվում է բավականին բարվոք վիճակում: Մարզում չկան արտադրական ձեռնարկություններ, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են: Տարածքի հաշվարկով այս օդային ավազան արտանետումների մակարդակը քիչ է հանրապետության միջինից շուրջ 6.3 անգամ:

Օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակությամբ մարզը գտնվում է բարվոք վիճակում, այս ցուցանիշը միջին հանրապետական մեկ շնչի հաշվով ցուցանիշից փոքր է շուրջ 3 անգամ:

Մարզն աչքի է ընկնում արևային օրերի հագեցվածությամբ, ինչը նպաստավոր է արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայաններ կառուցելու համար:

Համաձայն Գեղարքունիքի մարզի 2017-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարական ծրագրի՝ մարզի կլիման բարեխառն լեռնային է, ձմեռները ցուրտ են, առաջանում է կայուն ձնածածկույթ: Հունվարյան միջին ջերմաստիճանը -5˚-10˚Cէ: Ամառանը տաք է, արևոտ: Միջին ջերմաստիճանն հասնում է +18˚+20˚C-ի: Տեղումները քիչ են՝ 400-450 մմ, իսկ բարձրադիր շրջաններում հասնում է մինչև 1000 մմ-ի: Արևային օրերի քանակը կազմում է 300 օր:

Շողակաթ համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1930-1980 մ բարձրության վրա:

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 426մմ: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -4.6^{0}C է, հուլիսին՝ 16.6^{0}C::

Արևային կայանից ամենամոտ բնակավայրը գտնվում է 4 կմ հեռավորության վրա, մոտակա տարածքներում արդյունաբերական ձեռնարկությունները բացակայում են, որոնք մթնոլորտային օդի աղտոտման հնարավոր աղբյուրներ են: Ուստի տարածքի օդային ավազանը բարվոք վիճակում է:

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Շողակաթի (Շորժա) օդերևութաբանական կայանի դիտարկումները և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Օդի ջերմաստիճանը/ ^{0}C / **Աղյուսակ 1**

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Շորժա	1917	-4,6	-4,6	-1,7	4,4	9,4	13,2	16,6	16,9	13,7	8,5	3,1	-1,9	6,1	-32	34

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը **Աղյուսակ 2**

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը													Ձյան ծածկույթը		
	ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելա-գույնը, սմ	օրերի թիվը	ջրի առա-վելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Շորժա	12 12	15 22	23 24	42 38	69 38	65 43	49 44	37 66	33 43	40 38	26 40	15 18	426 66	41	77	68

Օդի հարաբերական խոնավությունը (%) **Աղյուսակ 3**

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենա-ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Շորժա	68	69	67	63	65	64	63	63	60	62	66	68	65	63	49

9.2 Հողային ռեսուրսներ: Շողակաթ համայնքը գտնվում է Արեգունի լեռների հարավ – արևելյան մասից դեպի Արտանիշի թերակղզի իջնող Ճանապարհին, Սևանի լեռների լճահայաց լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 95-105 կմ, մայրաքաղաքից՝ 110կմ :

Տարածքը ներկայացած է միջին բարձրությամբ լեռնաշղթաներով, ուղիղ և ալիքաձև թեքություններով և հարթություններով: Ապարները պրոլյուվիալ, դելյուվիալ առաջացումներ են: Տափաստանային էկոհամակարգերի կողմից տրամադրվող բարիքները և ծառայությունները մինչ օրս գնահատված չեն: Թեպետ տեղաբնակները ակտիվորեն հավաքում և անձնական կարիքների ու ներքին շուկայում վաճառելու համար օպտագործում են տափաստանային բազմաթիվ դեղատու և ուտելի բույսեր:Իսկ թեք լեռնալանջերին տեղակայված տափաստանները նույնիսկ օպտագործվում են որպես արոտներ՝ խոտհարքներ, սակայն տափաստանների մեծ մասը, հատկապես մեղմաթեք լանջերն ու հարթավայրերը, ներկայումս հիմնականում հերկվել են և օգտագործվում են երկրագործության նպատակով: Բնական վիճակում պահպանվել են միայն առանձին հատվածներ՝ առավել զառիթափ և քարքարոտ լանջերին, և փոքր կտորներ լեռնային սարահարթերի դաշտերի միջև: Ներկայումս Հայաստանում տափաստանները կորցնում են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ ջրային պաշարների պահպանման և գոլորշիացման կարգավորումը, հողապաշտպան ազդեցությունը, արոտավայրային դիպրեսիայի ռիսկի նվազումը, ջրային և քամու էրոզիայի կանխարգելումը, աղտոտումների չեզոքացումը, այդ թվում՝ հողում, բիոտայում և գյուղարտադրանքում: Հայաստանի 23 Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ տեսակների աճելավայրերի(ապրելավայրերի պահպանումը, բնական բուսականության վերարտադրման շնորհիվ փոշոտիչների քանակի ապահովումը և այլն: Համաձայն «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի հինգերորդ ազգային զեկույցից UNDP՝ տափաստանային էկոհամակարգերի պահպանությունը կատարվում է մի շարք ԲՀՊՏ-ներում՝արգելոցևազգային պարկեր, մի շարք արգելավայրեր, որոնց մակերեսը կազմում է 61 391.7 հա, ինչը ԲՀՊՏ-ների ողջ տարածքի 15.8 %-ն է:

Տարածքում գերիշխում են տափաստանային և կարբոնացված անտառային դարչնագույն հողերը, որոնք ձևավորվել են կարբոնատային, խճաքարային բերվածքների վրա: Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի հողերը էրոզացված են և սակավազոր: Հումուսակուտակիչ հորիզոնների հզորությունը կազմում է 0,25սմ:

Նախատեսվող գործունեության տարածքում կատարվել է հողի նմուշի լաբորատոր ուսումնասիրություններ, ըստ հողի ռեակցիայի հողանմուշը հիմնային է: Աղերի պարունակությունը հողանմուշում նորմայի սահմաններում է, ըստ մեխանիկական կազմի հողանմուշը միջակ կավավազային տիպի է, ըստ հումուսի պարունակության բավարար հումուսային, ըստ ազոտ, ֆոսֆոր, կալիումի հողանմուշը թույլ է ապահովված: /անալիզի արդյունքները (Հավելված 2):

Աղյուսակ 4.

Փորձաքննության արդյունքները

Հողա-նմուշների №	Հողի ռեակ-ցիան PH	Աղի պարու-նակութ-յունը, %	Մեխա-նիկական կազմը, % < 0.01մմ	Հումուս %	Սննդանյութերի քանակը, մգ 100 գր. հողում		
					Ազոտ	Ֆոսֆոր	Կալիում
Նմուշ № 1 0-25սմ	8.22	0.15	39.45	4.40	2.24	1.04	12.0
Պետք է լինի	*≈ 7.0*	*< 0.30*	*30 - 40*	*1.5 – 2.0*	*10.0*	*6.0*	*36.0*

9.3 Ջրային ռեսուրսներ: Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է: Մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չի մաքրվում:

Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:Լիճ են թափվում 28 խոշոր(Ձկնագետ, Մասրիկ, Սոթք, Կարճաղբյուր, Վարդենիս, Մարտունի, Արգիճի, Ծակքար, ՇողվակևԳավառագետ և այլն) ու փոքր գետակներ, սակայն սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը: Սևանա լիճ թափվող 10 խոշոր գետերից՝ Ձկնագետ, Կարճաղբյուր, Արգիճի, Շողվակ և Սոթք գետերի ջուրը «լավ» որակի է: Մնացած բոլոր գետերի գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդդաս)կամ «անբավարար» (4-րդ դաս):

Երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ^2, որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ^3 է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7 մ միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9մ):

Սևանա լիճը բաց լիճ է և ունի քաղցրահամ ջուր: Լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետակներ, սակայն սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ^3:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Այն գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է (18 մ), ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է էկոլոգիական խնդիր: 1978 թվականին ստեղծվում է Սևան ազգային պարկը: Ջրի մակարդակի բարձրությունը վերականգնելու

համար կառուցվել է Արփա – Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան – Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004 թվական):

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են: Մաքրման աշխատանքները շարունակվում են:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բանակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը: Կոյուղացման ցածր մակարդակները(հիմնականում ինժեներական ենթակառուցվածքներով) ստեղծում են ստորերկրյա և Սևանա լճի ջրերի ռազմավարական նշանակության պաշարների աղտոտման վտանգ: Մարզի քաղաքային համայնքների կեղտաջրերը անարգել լցվում էին Սևանա լիճ կամ հատուկ այդ նպատակով փորված կեղտաջրերի հորատանցքեր: Մաքման կայանների նախատեսումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են մակերևութային ջրային ռեսուրսները: Ամենամոտ ջրային ռեսուրսը Արեգունի(Սատանախաչ) գետն է, որը գործունեության տարածքից գտնվում է մոտ 25 կմ, իսկ Սևանա լճից՝ մոտ 4կմ հեռավորության վրա:

9.4 Կենսաբազմազանություն

Բուսական և կենդանական աշխարհ: Սևան ազգային պարկի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1.600 տեսակ բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի) այդ թվում՝ 55 հազվագյուտ ու անհետացող, 23 էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում: Դրանք են Լրձուն Սևանի, Ոզնաթուփ Գաբրիելյանի և այլն: Բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային/Festuca valesiaca Gaudin, F. ovina L., Koeleria albovii Domin, K. cristata (L.) Pers., Bothriochloa ischaemum (l.) Keng, Stipa capillata L., S. Lessingiana Trin. Et Rupr., S. Tirsa Stev., Elytrigia trichophora (Link) Nevski, Galium verum L., տեսակներ Agropyron, Andropogon, Scabiosa, Veronica, Artemisia, Achillea, Astragalus/:

Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով, այդ թվում՝ կաթնասուններ՝ 44 տեսակ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ ձուկ, այդ թվում Սևանի իշխանը, որը գրանցված է Կարմիր գրքում, Սևանի կողակը, Սևանի բեղլուն և այլն:

Շորժա համայնքում հանդիպում են շնագայլ, նապաստակ, լուսան, թխակապույտ աղավնի, արծաթափայլ որոր և անտառային կատու:

Բուսական աշխարհ: Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000 մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500 մ: Գոտին տափաստանային է և գորշ կարբոնատային, անտառային: Աչքի են ընկնում բուսական

համակեցությունների բազմազանությամբ: Ծայրահեղ չորասեր, պուղծավոր, պնդաճիմ հացազգի խոտաբույսերի, փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է:

Արևային կայանի տարածքում գերակշռում են հացազգիները և տարախոտային բուսականությունը:

Տարածաշրջանում կենդանիների բնորոշ տեսակներից են՝ ողնաշարավոր կենդանիների 96 (երկկենցաղներ՝ 4, սողուններ՝ 32, թռչուններ՝ 19, կաթնասուններ՝ 41) և անողնաշարների 992 տեսակ (փափկամարմիններ՝ 81, սարդակերպեր՝ 126, միջատներ՝ 785): Անողնաշարների տափաստանային ֆաունան ծագմամբ ավելի երիտասարդ է և համեմատաբար ավելի միատեսակ: Տափաստաններում հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքները, նաև հրդեհները բացասաբար են ազդում բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա: Բնական բուսածածկույթին փոխարինելու են պալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այպիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: (UNDP):

Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովիմակերևույթից բարձր, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկտափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոզնաթփերը, որոնց թվում կան մի շարքիազվագյուտ և անհետացող տեսակներ: Մարդու կողմից առավել յուրացված է հենց այս գոտին, որի զգալի մասը վերածվել է վարելահողերի, իսկ մնացածը ակտիվ օգտագործվում է որպես խոտհարքեր և արոտավայրեր:

Մարզի բուսական աշխարհը բավականին հարուստ և բազմազան է: Այստեղ գրանցված են մոտ 1600 տեսակ բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելին), այդ թվում՝ շուրջ 60 հազվագյուտ ու անհետացող, 20 էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում-ԼրզունՍևանի (ISATIS SEVANGENSIS N.), ՀայաստանյանՎառվռուկ (ALISSUM HAJASTANUM V.), Ոզնաթուփ Գաբրիելյանի (ACANTHOLIMON GABRIELJANAE Mirz.) և այլն:Տարածաշրջանում կանանոթավորբույսերի 1587 տեսակ, 32 ծառատեսակ, 102 թփերիտեսակ, 1146 բազմամյախոտաբույսև 307 միամյաուերկամյաբուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներհամարվումենդեղաբույսերև 100-ը՝ ուտելի: Կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակըուտելիեն, 24 տեսակը՝թունավոր: Տեղանքում աճում են հացազգիներին պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (Festuca sp.), որոմի (Lolium sp.) 95.1և դաշտավլուկների (Poa sp.) տարբեր տեսակներ:

Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ խոզանափուշ Ֆյոդորովի-Cousinia fedorovii Takht, լրջունՍևանի-Isatis sevangensis N. Busch, Թրաշուշան Հայաստանյան -Gladiolus hajastanicus Gabrielian, ՀիրիկՆրբագեղ - Iris elegantissima Sosn, Վիշապագլուխ ավստրիական -Dracocephalum austriacum L., Գառնառվույտ հայկական - Oxytropis armeniaca Sosn. ex Mulk.:

Նկար 8.

Խոզանափուշ Ֆյոդորովի Հիրիկ նրբագեղ

Արևային կայանի տարածքում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բացակայում են:

Կենդանական աշխարհ: Մարզի կենդանական աշխարհը նույնպես հարուստ ու բազմազան է:

Ողնաշարավոր կենդանիների ֆաունան ներկայացված է շուրջ 300 տեսակներով, այդ թվում՝ կաթնասուններ - 34 տեսակ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսան, ոչ հաճախ նաև արջ և այլն): Մարզի տարածքում հաշվարկվում են 43 տեսակի փափկամարմիններ, 639 տեսակի հոդվածոտանիներ, որոնք պատկանում են միջատներին: Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (Maculinea nausithous Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

Գրանցված են 9 ձկնատեսակներ: Լճում հանդիպում են երկարաչանչ խեցգետին, Սևանի էնդեմիկ իշխանը- SALMO ISCHCHAN Kessler՝ իր 4 տարատեսակներով, սիգ ձուկը, էնդեմիկ ձկներից՝ Սևանի բեղլուն-BARBUS LACERTA GOKTSCHAIKUS և Սևանի կողակը-VARICOHINUS CAPOETA SEVANGI:Պատահաբար լիճ է ներթափանցել նաև լճածածանը: Տարածաշրջանում հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ, 17տեսակի սողուններ, հանդիպում են թռչունների 267 տեսակ, կաթնասունների 44 տեսակ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին.

- Միջատակերներ (*Insectivora*),
- Կրծողներ (*Rodentia*),
- Նապաստակներ (*Logomorpha*),
- Չղջիկներ (*Chiroptera*),
- Գիշատիչներ (*Carnivora*),

❖ Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (*Artiodactyla*):

Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտակզաքիսը, անտառային կատուն, բեզոարյան այծը): Սողուններից հանդիպում են մի շարք մողեսներ, վալենտինի ժայռային մողեսը, սպիտակափոր ժայռային մողեսը, նաիրյան մողեսը, ռոստոմբեկովի մողեսը, հայկական ժայռային մողեսը, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դոդոշը, լճագորտը և փոքրասիական գորտը [11]:

Ջրային կամ ջրաճահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ափամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները: Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճիմակարդակի 19 մ իջեցումը, ինչպես նաև ավելի քան 10 հազ. հա ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ափերի վերացումը խիստբացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որըհատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների մոտ:

Սևանի ավազանում հանդիպում էին 267 տեսակի թռչուններ, որոնցից 48-ը բնադրող էին: 160 տեսակ չվող թռչուններից մնացել է 50-ը: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է էկոլոգիապես անկայուն:

Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում:

Կարմիր գրքում գրանցված են՝ Կաթնասունների 6 տեսակ, (Բեզոարյան այծ-Capra aegagrus Erxleben) և այլն), սողուններից 2 տեսակ(խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-Eremias arguta transcaucasica Darevsky, 1953)և փոքրասիականմողեսները-Parvilacerta parva Boulenger, 1887), 39 թռչնատեսակներ (Հայկական որոր-Larus armenicus), վարդագույն հավալուսն - Pelecanus onocrotalus Linnaeus,1758 և այլն), սագանմաններից՝ սպիտակագլուխ բադ կամ սավկա - Oxyura leucocephala Scopoli, 1769, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղլուն (Barbus goctschaicus Kessler) և Սևանի կողակը (Varicorhinus capoeta sevangi, Filippi) հոդվածոտանիներից՝ կապտաթիթեռը գրանցված է միջազգային միության Կարմիր գրքում:Արևային կայանի տարածքում կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները բացակայում են:

Նկար 9.

Փոքրասիական մողես

Բեզոարյան այծ

9.5 Բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման ու պահպանման նպատակով 1978թ ստեղծվել է «Սևան»Ազգային պարկը, որի տարածքում կան 4 ՝«Նորաշենի», «Լիճք-Արգիճի», «Գիլլի», «Արտանիշի» արգելոցներ և 3՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային» և «Նորաշենի» արգելավայրերը:

Արևային կայանի համար հայցվող տարածքում հետազոտությունը ցույց է տվել, որ.

ա/տարածքը տեղակայված չէ պատմամշակութային հուշարձանների սահմաններում, հատուկ պահպանվող, անտառային, կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում,

բ/այն օգտագործվում է որպես արոտավայր և ամեն տարի գործնականում գերարածեցվում է,

գ/ տարածքում առկա են գորշ կարբոնատային հողեր:

Արևային կայանի տարածքին ամենամոտ հեռավորության վրա գտնվում է «Արտանիշի» արգելոցը, որից ունեցած հեռավորությունը մոտ 1կմ է:

9.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ:

Շողակաթ համայնքում կան հետևյալ բնական, պատմական, մշակութային հուշարձանները. Սուրբ Աստվածածին եկեղեցի 17-րդ դար, գերեզմանոց խաչքարերով՝ 10-18-րդ դար, Դամբարանադաշտ՝ ք.ա. 2-1 հզմ, Մատուռ՝ 10-14-րդ դար: Սևանա լճի ափամերձ գյուղերում և շրջակայքում պահպանվել են մ.թ.ա. հզմ բերդի ավերակներ, դամբարաններ /մ.թ.ա. 2-1-ին հզմ/, եկեցեղի /17-րդ դար/, մատուռներ և այլ հնություններ: Ամենամոտ հուշարձանի հեռավորությունը ք.ա.2-1հազ. Ամրոց դամբարանադաշտն է՝ 1,01կմ:

								Աղյուսակ 5.
Շողակաթի գյուղական համայնքի պատմամշակութային հուշարձանների ցանկ								
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				Գերեզմանոց	16-17-րդ դդ.	գ.մ.	Տ	դպրոցից 200մ հս-ամ ճանապարհի եզրին(3կմ)
2.				Դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ	հս մասում	Հ	Շորժա-Աղբերք ճանապարհի 2 կողմերում, հայկական և ադրբեջանական գերեզմանոցների միջակայքի սարալանջին(4,5կմ)
3.				Դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ	1կմ հավ-ասե	Հ	Ավազահանքերի մոտ, Արտանիշ թերակղզի տանող դաշտամիջյան ճանապարհից ձախ(2կմ)
4.				Եկեղեցի	17-րդ դ.	ասե ղամասում	Տ	գյուղի եզրին, սարի ստորոտին(4,58կմ)
	4.1.			Խաչքար	10-րդ դ.		Հ	ագուցված հս պատին, արտաքուստ
	4.2.			Խաչքար	10-11-րդ դդ.		Հ	ագուցված ամ պատին, արտաքուստ, հորիզոնական դիրքով
	4.3.			Խաչքար	10-11-րդ դդ.		Հ	ագուցված ամ պատին, արտաքուստ

	4.4.			Խաչքար	13-14-րդ դդ.		Հ	եկեղեցու ներսում, դրված գլխիվայր, արձանագիր
	4.5.			Գերեզմանոց	10-17-րդ դդ.		Տ	եկեղեցու շուրջը
		4.5.1		Խաչքար	12-րդ դ.		Հ	վերնջնամասը՝ չի պահպանվել
		4.5.2		Խաչքար	միջնադար	գյուղի աեղամասում, 17դ. եկեղեցու մոտ տարածվող գերեզմանոցում	Հ	Թևավոր
5.				Խաչքար	1550թ.	գ.մ.	Հ	Սերգեյ Սարգսյանի տնամերձում
6.				Մատուռ	10-14-րդ դդ.	աեղամասում	Տ	գյուղի աե եզրին, եկեղեցուց 200մ հվ-աե, բլրի գագաթին(4,38կմ)
7.				Ամրոց դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ			Արտանիշի արգելոցի տարածքում 0.7հա(1,01կմ)
8.				Խաչքար	17-րդ դ.			Սերգեյ Սարգսյանի տնամերձում 5.7քմ

9.7Բնության հուշարձաններ. Գեղարքունիքի մարզը և Սևանի ավազանը հարուստ են բնական հուշարձաններով: Կան 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրաերկրաբանական, 1-ը ջրագրական և 1-ը՝ կենսաբանական.

- Վարդենիսի լեռնաշղթայի հրաբխային և խարամային կոները(Աժդահակ,Կարմրասար, Սպիտակասար լեռնագագաթները),
- Լանջաղբյուր, Կարմիր գյուղ, Գեղարքունիք գյուղերի շրջակայքիժայռայինմերկացումները,
- Սևանի լեռնաշղթայի լանջերի (Շորժա գյուղի շրջակայքում) օֆիոլիտային ապարների մերկացումները,
- Արտանիշի թերակղզու կրաքարերի մերկացումները,
- Սպիտակասար լեռնագագաթի արևելյան մասում օբսիդիանների մերկացումները,
- Լճաշեն գյուղի, Գավառքաղաքի շրջակայքի էլյուվիալ քարացրոնները (չինգիլներ),
- Գրիձոր, Արգիշի գետերիկիրճերը,
- Մարտունի, Գրիձոր, Գեղարքունիք, Աստղաձոր, Վարդենիս գետերի վերին հոսանքների տաշտակաձև հովիտները,
- Արեգունի լեռնաշղթայի կաղնու և գիհու նոսր անտառները,Արեգունու, Սևանի, Փամբակի լեռնաշղթաների անտառային տարբեր մնացուկային ձևերը,
- Մասրիկ, Վարդենիս գետեր հովիտների ճահճոտմարգագետինները և եղեգնուտները,
- Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջերի քարացրոնները՝ «լուսնային լանդշաֆտ»-ը,
- Արգիճի գետիոլորաններ և ճահճոտհովիտը,

Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից հոսող գետերի կիրճերը՝ անտառային մնացուկային ձևերով:

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ բնության հուշարձանը՝ Արտանիշի թերակղզու կրաքարերի մերկացումները, գտնվում են մոտ 1,3կմ հեռավորության վրա:

10. Տարածքի սոցիալ-տնտեսական բնութագիրը

Նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի վարչական տարածքում: Շողակաթ խոշորացված համայնքը ձևավորվել է 2017թ.-ի նոյեմբերին: Համայնքի կենտրոնը Շողակաթ բնակավայրն է: Այն գտնվում է Արեգունի լեռների հարավ–արևելյան մասից դեպի Արտանիշի թերակղզի իջնող Ճանապարհին՝ ծովի մակերևույթից 1930-1980 մ բարձրության վրա: Նրա մեջ ընդգրկված են 6 բնակավայր՝ Աղբերք, Շողակաթ, Արտանիշ, Դրախտիկ, Ծափաթաղ և Ձիլ գյուղերը: Շողակաթ գյուղը(նախկինում՝ Շորժա) հիմնադրվել է 1810-ական թվականներին Ռուսաստանի Մոլդովիայի մարզից եկած աքսորականների միջոցով: Գյուղը նախկինում կրել է Նադեժդինո անվանումը: 1932թ. Նադեժդինո գյուղը վերանվանվել է Շորժա:Գտնվում է Սևանա լճի ափից 200 մ հեռավորության վրա, մարզկենտրոնԳավառից 95 կմ հյուսիս–արևելք: Շողակաթ բնակավայրի տարածքը 3923.32 հա է, բնակիչների թիվը՝ 608 մարդ, համայնքի բնակչության թիվը՝ 3.511 մարդ: Բնակչությունը նախկինում եղել է միատար, բնակվել են միայն մոլդովացիներ: 1989-1992թթ. գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանից եկած փախստականներով և Արծվաշենից բռնի տեղահանվածներով:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի քրոմիտի պաշարներ: Համայնքը գազիֆիկացված է, ապահովված է համապատասխան ենթակառուցվածքներով(էլեկտրամատակարարում, աղբավայր, գերեզմանոց): Գյուղի միջով է անցնում Երևան-Զոդ ավտոճանապարհը և Երևան-Զոդ երկաթուղին: Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, նախակրթարան, բուժկետ, երկաթուղային կայարան, օդևերևութաբանական կայան, մի քանի հանգստյան տներ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են մ.թ.ա. 1-ին հզմ.բերդի ավերակներ, դամբարաններ(մ.թ.ա. 2 -1-ին հզմ.եկեղեցի (17-րդ դար) մատուռներ և այլ հնություններ:

11. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը:

Զրոյական տարբերակ նշանակում է նախատեսվող գործունեության չիրականացում.

- կիանգեցնի առաջին 20 տարվա ընթացքում մոտ 198,5 ԳՎտ.ժ էլեկտրաէներգիայի այլ աղբյուրներից արտադրմանը: Նշված քանակի էլեկտրաէներգիայի պահանջարկը հնարավոր կլինի ապահովել շրջակա միջավայրի վրա առավել ազդեցություն ունեցող էներգիա արտադրող այլ գործունեությունների շնորհիվ՝ ջերմաէլեկտրակայան, հիդրոէլեկտրակայան և այլն, ինչն իր հերթին կհանգեցնի շրջակա միջավայրի վրա էական ազդեցությունների աճին:
- Արևային էլեկտրակայանի միջոցով էլեկտրաէներգիայի ստացումը նպաստելու է օդում ածխաջրածինների կրճատմանը, որոնք արտանետվում են էներգիայի ստացման այլ աղբյուրներից: Ածխաջրածինները նպաստում են կլիմայի փոփոխությանը՝ իր բոլոր վտանգավոր հետևանքներով:

Արևային էլեկտրակայանների ներդրումը էներգետիկ համակարգում համարվում է ամենահեռանկարային այլընտրանքային ճյուղը: Համաձայն միջազգային էներգետիկ գործակալության տեսության 40 տարի հետո արևային էներգետիկան կարտադրի ամբողջ համաշխարհային էներգետիկ պահանջարկի շուրջ 20-25 %-ը, ինչն իր հերթին կնպաստի տարեկան 6 միլիարդ տոննա ածխաջրածնային գազերի կրճատման:

Տարածքի այլընտրանք: տարածքն ընտրված է ելնելով արևային էներգետիկայի զարգացման համար նպաստավոր պայմաններից: Աշխարհագրական դիրքը և ծովի մակարդակից ունեցած բարձրությունը՝1960մ, նպաստավոր պայմաններ են ստեղծում արևային էներգետիկայի զարգացման համար: Տարածքը գերարածեցված է, գտնվում է մարդու ակտիվ գործունեության գոտում: Հողի նպատակային նշանակությունը՝ էներգետիկ ենթակառուցվածքների է:

Ընտրված տարբերակի հիմնավորումը: Նորագույն տեխնոլոգիաների սրընթաց աճի հետ զուգահեռ կարևոր է շրջակա միջավայրի պահպանման գիտակցումը, և այնպիսի առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը, որոնք անվտանգ են շրջակա միջավայրի համար:

Վերականգնվող էներգետիկ համակարգերը, որոնց թվին են պատկանում արևային էլեկտրակայանները, գործնականում արդեն լայն կիրառում ունեն աշխարհում:

Աշխարհը հիմնված է էներգետիկ պաշարների օգտագործման վրա, որոնք հետզհետե սպառվում են և չեն վերականգնվում: Էներգիայի ստացման մեթոդները վնասում են բնությանը և մարդկանց առողջությանը, միաժամանակ սպառնում երկրի բնական պաշարների նավազեցմանն ու անհետացմանը: Ներկայումս էլեկտրաէներգիայի 70%-ն աշխարհում արտադրվում է հանածո վառելիքների հիման վրա (նավթ, ածուխ, բնական գազ): Ջերմային էներգիայի արտադրությունում հանածո վառելիքների մասնաբաժինը 90% է:

Հայաստանում ըստ 2012թ. ցուցանիշների էլեկտրաէներգիայի արտադրության 42.3% ստացվել է բնական գազից, 28.9%՝ հիդրոէներգիայից, 28.8%՝ միջուկային էներգիայից: Մեկ մարդու հաշով էներգիայի ծախսի երկրների ցուցանիշների ցանկում, Միջազգային էներգետիկ ընկերության (International Energy Agency) տվյալներով Հայաստանը գտնվում է 82-րդ տեղում՝ 1606.366 ԿՎ/Ժ ցուցանիշով:

Այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը թույլ է տալիս զգալիորեն նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, ինչպես նաև կրճատում է էներգիայի ստացման ծախսերը: Էներգախնայողությունն էապես կարող է նպաստել և՝ շրջակա միջավայրի, և ամբողջ մոլորակի բնապահպանական խնդիրների լուծմանը: Ներկայիս տեխնոլոգիաները, որոշակի ներդրում կատարելուց հետո, թույլ են տալիս նույնիսկ տնային տնտեսություններին ունենալ սեփական, բնական էներգիայի ստացման աղբյուրներ: Էներգիայի և ռեսուրսների անխնա սպառման հետևանքները գալիք սերունդների համար կարող են ունենալ լուրջ բացասական ազդեցություն, ուստի այլընտրանքային, վերականգնվող այդ թվում արևային էլեկտրաէներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում թե շրջակա միջավայրի պահպանման, և թե մարդկության կայուն զարգացման համար:

Գործունեության առաջին 20 տարվա ընթացքում կայանն արտադրելու է մոտ 198.5 ԳՎտ.ժ էլեկտրաէներգիա, ինչը կլրացնի հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկը, օգուտների և վնասների համեմատական վերլուծությունից ակնհայտ է, որ արևային էլեկտրակայանների օգուտները շատ ավելին են, քան պատճառվող վնասները:

Ընտրված տարածքը ևս բավականին նպաստավոր է արևային էներգետիկայի զարգացման համար, շրջակա միջավայրի վրա հնարավոր ցածր և աննշան ազդեցություններով:

12. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատում

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ= ՀԱԳ + ՋԱԳ +ՕԱԳ ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: Արևային կայանի և ՕԳ շինարարության ընթացքում հողերի աղտոտում կամ վնասում չի նախատեսվում:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: Արևային կայանի և ՕԳ շինարարության ու շահագործման ընթացքում աղտոտված արտահոսք չի առաջանում և ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է:

Մթնոլորտային օդ

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է, արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասի հաշվարկը կատարված է ըստ ՀՀ կառավարության 2005թ-հունվարի 25-ինընդունած՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի:

Արևային կայանի և ՕԳ շահագործման ընթացքում արտանետումներ չեն առաջանում: Արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում:

Արտանետումների քանակների և դրանց հետևանքով տնտեսական վնասի հաշվարկները բերված են հավելվածների մասում:

Ըստ այդ հաշվարկների շինարարական աշխատանքների ժամանակ սպասվող արտանետումների հասցված տնտեսական վնասը գնահատվել է՝ 1783.328 դրամ /Հավելված 7.):

13. Բնական ռեսուրսների, օգտագործվող հումքի ու նյութերի նկարագրությունը

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Ջուրն օգտագործվելու է նաև բետոնախառնուրդ ստանալու նպատակով: Շինարարության համար անհրաժեշտ բետոնանյութը բերվելու պատրաստի վիճակում: Բետոնն օգտագործվելու է հիմնականում կայանում արևային վահանակները կրող կոնստրուկցիայի հիմքերի տեղադրման և շահագործման փուլում նախատեսվող յուղընդունիչների կառուցման ժամանակ:

Շինարարության փուլում օգտագործվելու են նաև այլ շինարարական նյութեր՝ ամրան, մետաղ, ապակի, շինարարական քար, ավազ, ցեմենտ, շեբեն: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից: Բետոնանյութը և օգտագործվող այլ շինանյութերը պահվելու են փակ ծածկով մեքենաների թափքերում և այնտեղից հանվելու են միայն օգտագործման դեպքում, տեղադրվելով տակդիրների վրա:

14. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

ՇՄԱԳ շրջանակներում իրականացվել է արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է մշակել ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական մեղմման միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները:

Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները;

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետությանը վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

30մ երկարության Էլեկտրահաղորդման գծերի ուղեգիծը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հետևյալն են՝

- Կայանի և ՕԳ շինարարական աշխատանքների ընթացքում օդային ավազանի վրա ազդեցություն
- Կայանի և ՕԳ շինարարական աշխատանքների ընթացքում կենդանական և բուսական աշխարհի վրա ազդեցությունն:
- Տարածքն ունի հողի բերրի շերտ, շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ կլինի հանել և հեռացնել: Հողի բերրի շերտը պահպանվելու և պահեստավորվելու է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
- Կառաջանան աննշան քանակությամբ շինարարական թափոններ:

Շինարարության փուլ Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ և շինարարական աշխատանքներ:

Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են 4 ամիս՝ ըստ ժամանակացույցի:

Կայանի կառուցման շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկական և տրանսպորտային միջոցներ՝ 2 հորատող, 1 հարթեցնող, 1 ինքնաթափ, որոնք կարող են

լինել կապալառու կազմակերպության տրանսպորտային միջոցները կամ վարձակալվել այլ կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Աշխատանքների կատարման համար առանձին շինհրապարակ չի նախատեսվում: Շինարարական աշխատանքների համար նախատեսված մեքենաները և տեխնիկան կայանվելու են հարակից ճանապարհի եզրին, աշխատելու են հաջորդաբար՝ ըստ անհրաժեշտության: Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

14.1 Օդային ավազան -ՀայԷկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույց[1] համաձայն մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Շողակաթ համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են[2]:

- Փոշի՝ 0.2 մգ/մ^3;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ^3;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ^3;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ^3:

Արևային կայանի համար նախատեսված տարածքը գրեթե 4 կմ հեռու է բնակելի տարածքներից[3], ինչպես նաև համայնքի բնակչությունը ընդամենը 3.511 մարդ է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրում է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ: Համաձայն հաշվարկների անկազմակերպ փոշու արտանետումները հավասար են 0,048տ/շին. ժամանակահատված կամ 0,19գ/վրկ: Շինարարության ընթացքում շինարարական տեխնիկայի արտանետումները ներկայացված է աղյուսակում:

Աղյուսակ 6. Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /208ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.034	0,000025
CH (ածխաջրածիններ)	8.403	0.0078	0.0058
NO_2 (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.422	0.039	0,029
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.004	0,003
Ծծմբային անհիդրիդ		0,0083	0,32
Անկազմակերպ փոշու արտանետում		0,19	0,048

Արտանետումների հաշվարկը ներկայացված է Հավելված 8-ում:

14.2. Հողային ռեսուրսներ. ԱՖԷԿ-ի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի, հաստատուն հոսանքի մալուխների, փոփոխական հոսանքի մալուխների անցկացման խրամուղիների, հողանցման կոնտուրի, ենթակայանի տեղադրման, յուղահավաք հորի և ցանկապատման ու արտաքին լուսավորման հողային աշխատանքներ: Հաշվարկներն իրականացվել են ըստ նախագծային լուծումների, համաձայն որի հողի հանույթի ընդհանուր ծավալը կազմում է 2.142,835մ^3, որից բերրի շերտը՝ 738,9625մ^3: Ողջ հողային զանգվածից 673,96մ^3 կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր, իսկ մնացած մասը կօգտագործվի որպես հետլիցք (Հավելված 9.):

Կայանի կառուցման ընթացքում հողաբուսաշերտի այլ խախտում չի նախատեսվում և այլ ազդեցություններ չեն գնահատվում:

14.3. Ջրային ռեսուրսներ. շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով: Ջրցանի և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի: Հարակից տարածքներում մակերևութային ջրային ռեսուրսներ չկան, մոտակա ջրային ռեսուրսը Սևանա լիճն է, որը գտնվում է մոտ 4 կմ հեռավորության վրա: Արևային կայանների աշխատանքից, նշված հեռավորության վրա Սևանա լիճը որևէ ազդեցություն չի կարող կրել: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ծովի մակարդակից 2030մ. բարձրության վրա, տարածքում ձորակներ չկան, առավելագույն ելքերի առաջացման հնարավորություն և նրանցից սպառնացող ռիսկերը բացակայում են:

Նախատեսվում է իրականացնել ջրցան 700-750մ երկարությամբ գրունտային ճանապարհին, որի մակերսը կազմում է.

725*3,5=2 537,5մ^2

Փոշենստեցման նապատակով ջրի ծախսը 1մ^2 տարածքում փոշին նստեցնելու համար կազմում է 0.5լիտր/մ^2 , հետևաբար.

2 537,5*0,5=1 268, 75լ/մ^2 ջուր:

Կեղտաջրերի հեռացում. աշխատողներն օգտվելու են հարակից տարածքում՝ մոտ 250մ հեռավորության վրա գտնվող գոյություն ունեցող կեղտաջրերի հեռացման ցանցից (լվացարան, սեպտիկ հոր):

Ուստի շինարարության և շահագործման ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

14.4. Կենսաբազմազանություն.Արևային կայանի կառուցման տարածքում գերակշռում են հացազգիները և տարախոտային բուսականությունը: Տարածքն անտառածածկ չէ: Բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակները:

Տարածքը երկար տարիներ օգտագործվել է որպես արոտավայր, գերարածեցված է, գտնվում է մարդու ակտիվ գործունեության գոտում: Տարածքում բացակայում են կարմիր գրքային բուսականությունը և կենդանական աշխարհը: Չկան հատուկ պահպանվող և զգայուն էկոհամակարգեր: Շինարարությունը տևելու է չորս ամիս, ուստի աննշան ազդեցությունները կրելու են կարճատև և ժամանակավոր բնույթ:

Արևային էլեկտրակայան կառուցելու արդյունքում տարածքի մի մասը ծածկվում է արևային մոդուլներով և ստվերվում է հողի զգալի մասը: Արևային էլեկտրակայանի մոդուլները ստվերում են զբաղեցված տարածքի 25-30 տոկոսը: Մնացածը մասնակիորեն է ստվերվում, ընդ որում արևածագին և արևամուտին լուսավորվում է ամբողջովին՝ գտնվելով արևի ուղիղ ճառագայթների տակ: Մասնակիորեն լուսավորված տարածքներում ստեղծվելու է բուսական նոր համակեցություն, որի կազմում տեղ են գտնելու թե՛ տեղաբնիկ ստվերասեր բույսերը, որոնք մինչև այդ հնարավոր է, որ տարածքներում չեն աճել, որոշակիորեն պահպանվելու են նաև բուսատեսակների առկա տեսակային կազմը :

Ստեղծված նոր էկոհամակարգի վրա որոշակի ազդեցություն է թողնելու նաև հողի խոնավության նոր ռեժիմը, որը հետևանք է լինելու մթնոլորտային տեղումներից առաջացող խոնավության անհամաչափ բաշխման: Արևային մոդուլներով ծածկված տարածքի տեղումները ցած հոսելով մոդուլների ցածի եզրից՝ բաշխվելու են տարբեր ձևով, սակայն դրանք կենսաբազմազանության առումով էական փոփոխություն չեն կարող առաջացնել: Այսպիսով արևային մոդուլներով զբաղեցված տարածքում ստեղծվելու է նոր էկոհամակարգ, որը ժամանակի ընթացքում աստիճանաբար կայունանալու է: Նկատի ունենալով տարածքի գերարածվածությունը, նոր էկոհամակարգի ձևավորման հնարավորությունը և նպաստավոր պայմանները, ենթադրվում է, որ կենսաբազմազանության վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, դրանք առավել քան դրական միտում են ունենալու:

14.5 Թափոններ. շինարարության փուլում առաջանալու են թափոններ.

-շինարարական աղբի տեսքով(409կգ)՝ նյութերի մնացորդներ(ավազ, շեբեն,ցեմենտ, մետաղյա լարեր, պլաստմասե իրեր), աղտոտված լաթեր,պարկեր,

- կենցաղային աղբ – կառուցապատման փուլում՝ 1.360կգ, շահագործման փուլում՝ 2.160կգ/տ:

Արևային Կայանի շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի հնարավոր վերանորոգման ժամանակ առաջանալու են վտանգավոր թափոններ: ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի համաձայն հնարավոր թափոններն են.

• Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 15տ/տարի քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորի յուղընդունիչի տարողությամբ:

• Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4):

• Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4):

• Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից ավե(3-րդ դաս՝ 1402303 04 03):

• Սև մետաղի ջարդոն (4-րդ դաս՝ 5131100 01 00 4):

14.6 Սոցիալական ազդեցություն

Նախագծի հիմնական սոցիալական ազդեցությունները հետևյալն են՝

- Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր վնասներ արոտավայրերի ճանապարհին:
- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Դրական սոցիալական ազդեցությունները կապված կլինեն տարածքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծման և հնարավոր աշխատատեղերի բացման հետ:
- Տարածքում չեն հայտնաբերվել բնության, պատմական կամ մշակութային արժեքներ և ազդեցություն չի սպասվում, այնուամենայնիվ դիտարկվել է, քանի որ նախագծի իրականացման ժամանակ տարածքի մերձակայքում կարող են հայտնաբերվել անհայտ, հնագիտական արժեքներ:

Նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի վարչական տարածքում: Շողակաթ խոշորացված համայնքը ձևավորվել է 2017թ.-ի նոյեմբերին: Համայնքի կենտրոնը Շողակաթ բնակավայրն է: Այն գտնվում է Արեգունի լեռների հարավ–արևելյան մասից դեպի Արտանիշի թերակղզի իջնող Ճանապարհին՝ ծովի մակերևույթից 1930-1980 մ բարձրության վրա: Նրա մեջ ընդգրկված են 6 բնակավայր՝ Աղբերք, Շողակաթ, Արտանիշ, Դրախտիկ, Ծափաթաղ և Ձիլ գյուղերը: Համայնքի բնակչությունը կազմում է 3,511 մարդ: Գործունեության շինարարական աշխատանքներին ներգրավելու են 34 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Մարզի համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, գործարարությունը լուրջ ազդեցություն չի ունեցել, քանի որ գործարարությամբ զբաղվողների թիվը համայնքներում չափազանց փոքր է: Հողի ձեռք բերման կամ փոխհատուցման հետ կապված խնդիրներ կամ խոչընդոտներ չկան, նկատի ունենալով որ այն տեղակայվելու է Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում՝ «ԳՐԻՆ ԷՆԵՐՁԻ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողերում, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:

Նախատեսվող գործունեությունը համահունչ է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2012-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» դրույթներին: Համաձայն ծրագրի նախատեսվում է մարզում փոքր և միջին ձեռնարկությունների խթանման համար իրականացնել վարկային

երաշխավորությունների տրամադրում, խորհրդատվությունների տրամադրում, գործարար ուսուցում, տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում սկսնակ և գործող փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտներին: Նախատեսված են արտասահմանյան կազմակերպությունների հետ երկխոսության ու համագործակցության կայացման խթանում, համայնք-բիզնես կապի սերտացում: Մարզում արևային կայանների հիմնումը կստեղծի աշխատատեղեր սոցիալապես անապահով խավի համար և որոշակիորեն կնպաստի համայնքի հետագա զարգացմանը:

14.7 Աղմուկ և թրթռում: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ»N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները և երկաթուղին, որոնք գտնվում են մեծ հեռավորության վրա: Ելակետային իրավիճակում տարածքում աղմուկի մակարդակը ցածր է, գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին չեն:
Շինարարական աշխատանքների ընթացքում ավտոմեքենաների և սարքավորումների աշխատանքից աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Այնուամենայնիվ, հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Արևային էլեկտրակայանի շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, աղմուկը չի կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը:

Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական և հատուկ միջոցառումների կարիք չկա:

14.8 Էլեկտրական և մագնիսական դաշտ

ՕԳ և ենթակայանը նախագծվել են ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ 110ԿՎ Օդային գիծն ունի ընդամենը 30մ երկարություն, ինչը չի կարող զգալի Էլեկտրական և մագնիսական դաշտ ստեղծել և որևէ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և բավականին մեծ հեռավորության վրա գտնվող բնակավայրերի վրա:

14.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ: Արևային էլեկտրակայանի տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձանները բացակայում են: Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան պետական մարմնին *(Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)*, համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար*:*

Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները ,
- Տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարությանը,
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից,
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
- Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն տեղական իշխանությունների և պատասխանատուների կողմից տրված գրավոր թույլտվության առկայության դեպքում:

Ուսումնասիրությունների ընթացքում շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել այլ տեղամասերում, մինչև համապատասխան թույլտվության տրամադրումը:

14.10 Լուսավորություն և ջեռուցում. շինարարության փուլում տարածքում աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր հանգստի կացարան(տնակ), որի լուսավորությունը և ջեռուցումը կկատարվի հարակից կայանից ժամանակավոր էլեկտրական հոսանքի անցկացման միջոցով, ինչը շրջակա միջավայրի վրա ազդեցություններ չի ունենալու:

14.11 Բարեկարգում. արևային կայանի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված, գոյություն ունեցող ճանապարհի կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

14.12 Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն. շինարարության փուլում **արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը կապված են** եղանակային ծանր պայմաններից, հրդեհների և աշխատանքի անվտանգության հետ, ինչպես նաև հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող տեխնիկայի վթարների հետ: Այդ դեպքերում շինարարական աշխատանքներն անհապաղ կդադարեցվեն և աշխատողները կհեռանան տարածքից:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել հնարավոր հրդեհային իրավիճակների դեպքում, ինչի կանխման համար նախատեսված են համապատասխան միջոցառումներ:

14.13 Մարդու առողջություն և անվտանգություն: շինարարական աշխատանքների ընթացքում առողջության վրա և անվտանգության ապարեզում անմիջական ազդեցությունը կապված է էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի, և այլ գործոնների հետ:
Պոտենցիալ վտանգ առողջության և անվտանգության համար կարող է առաջանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման) պատճառով:
Շինարարության ամբողջ ընթացքում ապահովելու է բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

14.14 Գումարային ազդեցություններ - Գործունեության հարակից տարածքում՝ մոտ 200մ հեռավորության վրա գտնվում են 2ՄՎտ հզորությամբ «Արտանիշ 1» և «Արտանիշ 2» արևային կայանները, տարածքում այլ արտադրություններ չկան: Գոյություն ունեցող արևային կայանների հետ որևէ գումարային ազդեցություններ չկան:

ՇՄԱԳ հաշվետվությունը ցույց է տալիս, որ նախագիծը շրջակա միջավայրի վրա կունենա ցածր ազդեցություն, եթե իրականացվեն առաջարկվող բոլոր մեղմող միջոցառումները: Համաձայն ՇՄԱԳ-ի, բացասական ազդեցություններն առաջանում են հիմնականում շինարարականության փուլում: Շահագործման փուլում, ակնհայտ է դրական ազդեցությունը, որն է՝ էկոլոգիապես ավելի անվնաս և հուսալի էներգիայի մատակարարում:

Գնահատելով արևակայանի կառուցման ազդեցությունը (գնահատման 0-5 ցուցանիշներով) շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կարելի ներկայացնել հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 7.

Շրջակա միջավայր	Հավանական ազդեցությունը/A/	Ազդեցության հետևանքը/B/	Ազդեցության գնահատումը/A*B/	Ազդեցության աստիճանը
Շինարարության փուլ				
1.Օդային ավազան	1	0	0	ցածր
2. Ջրային ռեսուրսներ	0	0	0	չունի
3.հողային ռեսուրսներ	2	1	2	միջին
4.Կենսաբազմազանություն	1	1	1	ցածր
5. Բնության և մշակութային հուշարձաններ	0	0	0	չունի

Շահագործման փուլ				
1.Օդային ավազան	0	0	0	չունի
2. Ջրային ռեսուրսներ	0	0	0	չունի
3.հողային ռեսուրսներ	1	1	1	ցածր
4.Կենսաբազմազանություն	1	0	0	չունի
5. Բնության և մշակութային հուշարձաններ	0	0	0	չունի

15. Շինարարության փուլի ժամանակացույցը

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են հողային և շինարարական աշխատանքներ:

Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են 4 ամիս՝ ըստ ժամանակացույցի:

№	Աշխատանքի անվանումը	Աշխատանքներ տևողությունը ամիսներով															
		I ամիս				II ամիս				III ամիս				IV ամիս			
1	Նախնական ինժեներական և հողային աշխատանքներ																
2	տրանսֆորմատորային 110/0,8/0,8 կՎ 6300կՎԱ լարման ենթակայանի շինարարություն																
3	Կրող կոնստրուկցիաների հիմքերի հորատում, հենույուների տեղակայում, շինաղբի տեղափոխում																
4	Կրող կոնստրուկցիաների ձգում, տարածքի ցանկապատում																
5	Մալուխների անցկացում																
6	Հողանցման ցանցի մոնտաժ																
7	Արտաքին լուսավորության համակարգ																
8	Արևային վահանակների տեղադրում																
9	Տարածքի բարեկարգում																
10	Գրունտային ճանապարհի նորոգում																
11	Ենթակայանի և ղեկավարման շենքի ներքին հարդարում																
12	Ինվերտորների տեղադրում և էլեկտրական միացում																
13	Տրասնֆորմատորների էլեկտրական միացում																
14	Տեսահսկման համակարգի մոնտաժում																
15	Կայանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ																

16. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ.

16.1 Շինարարության փուլ

16.1.1 օդային ավազան. գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան հնարավոր արտանետումները լինելու են ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի տեսքով, ինչպես նաև հողային աշխատանքների(փորման, բեռնման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- տարածքում նութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

16.1.2 Հողային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման արդյունքում առաջացող հողի բերրի շերտը՝248,608մ^3 բերրի հող հանվելու և պահվելու է համաձայն՝ՀՀ կառավարության 02.1.2017թ.«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջների:Մասնավորապես.

- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրելու են խոշոր քարերից, թփերից, կոճղերից,
- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները և պահեստավորվելու է՝ առանձին,
- հանված բուսահողը պահեստավորվելու է անմիջական հորատանցքերի հարևանությամբ, պահվելու է ծածկված վիճակում,
- այն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ տարածքի բարեկարգման համար,

- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է գրունտային ճանապարհի վրա հողային ռեսուրսները չաղտոտելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու է գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

16.1.3 Ջրային ռեսուրսներ. շինարարության փուլում տեխնիկական ջրի(ջրցան) պահանջը կբավարարվի ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով(շշերով)՝ ըստ պահանջի:

- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված մեքենաներով,
- շինարարության փուլում աշխատողները կօգտվեն հարակից տարածքում գործող արևային կայանի գոյություն ունեցող սեպտիկ հորից:

16.1.4 Կենսաբազմազնություն.գործունեության ենթակա տարածքում կենսաբազմազանության հայտնաբերման և դրանց պահպանման անհրաշետությունից ելնելով նախատեսվում է.

- մշակվելու է գործողությունների պլան, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից,
- ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ ընկերությունը նախօրոք առանձնացնելու է հատուկ պահպանման գոտի՝ վերջիններիս տեղափոխելու և վերատնկելու համար:

16.1.5 Թափոններ.շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որոնց հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսներ մեղմելու նպատակով նախատեսվում է.

- վտանգավոր նյութերը և մետաղական թափոնները կփոխանցվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,
- շինարարական թափոնները՝մոտ 409կգ՝բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն կտեղափոխվեն և կտեղադրվեն համայնքի կողմից հատկացված վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,
- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու են և տեղափոխվելու են աղբավայր:

16.1.6 Աղմուկ և թրթռում.շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու շինարարական տեխնիկայի աշխատանքի հետ, որի համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործվելու են սարքին վիճակում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:

16.1.7 Արտակարգ իրավիճակներ.

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.

- նախատեսվող գործունեության վայրն ապահովելու է հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,

- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

16.1.8 Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի անվտանգություն.

Աշխատողների աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

-1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ.հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան,

- աշխատողների համար հատկացվելու են ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարականկենցաղային սենքերի» N 2.2..80 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,

- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, պարտադրվելու է դիմակների կրումը:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, ազդեցությունները կլինեն շատ ցածր:

16.1.9 Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումները ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակները մաքրվելու են, վերականգնվելու է լանդշաֆտը:

16.2 Շահագործման փուլ. շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու կայանի անվտանգ շահագործման, ջրային ռեսուրսների օգտագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, ինչպես նաև թափոնների առաջացման հետ: Գործունեության տարածքն արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների, քանի որ կայանից մոտ 200 հեռավորության վրա գործում են այլ արևային կայաններ: Տարածքն օգտագործվել է որպես արոտավայր, հողային ծածկույթն արդեն իսկ ենթարկելով էրոզիայի: Հնարավոր ազդեցությունների մեղման կամ կանխարգելման նպատակով նախատեսվում է միջոցառումների իրականացում.

- մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ մեկ աշխատողի միջոցով,
- մշտական գործելու է պահակակետ, որտեղ տեղադրվելու են հեռուստացույց, մոնիտոր՝ անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար:

16.2.1 Ջրային ռեսուրսներ.

- աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու են հարակից տարածքում գոյություն ունեցող սանիտարական հանգույցից(սեպտիկ հոր),

16.2.2 Հողային ռեսուրսներ.

- ընկերության կողմից հնարավորինս կպահպանվեն գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները,
- կկատարվեն բազմամյա խոտաբույսերով ծածկում (ցանքս),
- հողի խոնավացման նպատակով՝ ջրցանման աշխատանքներ, որի համար ջուրը տարածք կտեղափոխվի ջրցան մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով:

16.2.3 Թափոններ. Շահագործման փուլում հնարավոր է թափոնների առաջացում, որոնց ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար նախատեսվում է.

- Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:
- Հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորները, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,
- Յուղոտված լաթեր խառնվելու է կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերությամբ և տեղադրվելու է քաղաքային աղբավայրում կամ հանձնվելու է վերամշակող կազմակերպություններին:
- Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին:
- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով:
- Սև մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին:

16.3 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. ենթակայանի և օդային գծի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ՀՀ կառավարության N 363-Ն 02.04.2009թ. որոշման պահանջների համաձայն:

Տեղադրվելու է.

- ինվենտորների մեջ ներկառուցված հատուկ WiFI swich-եր,
- տեսահսկման համակարգ, 35 հատ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ:

Կայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով.

-ենթակայանի տարածքում՝ հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ, իսկ արևային կայանում՝ կրակմարիչներ,
- առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով:

Շահագործման փուլում ընդգրկվելու են 6 աշխատող, որոնք աշխատելու են հերթափոխով:

Կարողությունների զարգացում. Արևային կայանի աշխատանքների անվտանգությունը և հուսալիությունը ապահովելու նպատակով, այն պետք է համալրված լինի բարձրորակ և փորձառու մասնագետներով: Նման մասնագետներ հնարավոր է վարձել երկար տարիների փորձ ունեցող նմանատիպ ընկերություններից, հնարավոր է նաև նշված ընկերություններում կազմակերպել մասնագետների վերապատրաստման դասընթացներ: Նշված մասնագետներով համալրումը կապահովի կայանի անվտանգ և անխափան աշխատանքը, հնարավորություն կտա մոնիտորինգի պատշաճ իրականացում:

Համապատասխան մասնագետները հետևելու են բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլաններով նախատեսված միջոցառումների ժամանակին և պարտադիր իրականացմանը:

17. Փակման փուլ

Շահագործման ժամկետի ավարտից հետո ընկերությունը հետագա հնարավորությունների բացակայության պայմաններում կատարելու է կայանի սարքավորումների ապամոնտաժում և տարածքի նախկին տեսքի բերում: Գործողությունները կատարվելու է համայնքի վերահսկողությամբ:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև աշխարհի զարգացած երկրներում, դեռևս գոյություն չունի արևային կայանների սարքավորումների, մասնավորապես ֆոտոէլեմենտներ պարունակող պանելների և այլ ուղեկցող մասերի՝ որպես թափոնատեսակի, լուծումները:

Քանի որ արևային կայանի պանելները (батарейка) պատրաստվում են տարբեր ֆոտոէլեմենտներ պարունակող (ապակի, պլաստիկ) նյութերից, որոնք իրենց մեջ պարունակում են (կապար, քրոմ, կադիում, սիլիցիում և այլ), ուստի դրանց ուտիլիզացիան և վերամշակումը հանդիսանում են հրատապ լուծում պահանջող խնդիր: ՀՀ կառավարության կողմից անհրաժեշտություն կա մշակելու արևային կայանի գործարկման ժամկետը լրացած և գործածությունից դուրս եկած «արևային» թափոնների՝ պանելների, ֆոտոէլեմենտներ պարունակող արևային սնուցիչների վերամշակման ծրագիր, նաև համապատասխան օրենքի ընդունում, հաշվի առնելով առաջավոր զարգացած երկրների փորձը:

Մինչև համապատասխան ռազմավարության մշակումը ընկերությունը նախատեսում է կիրառել հետևյալ հնարավոր տարբերակները.

-հնարավորության դեպքում վերանորոգել և կրկնակի օգտագործել վթարված մասերը,

- ֆոտոէլեմենտներ պարունակող պանելները չթաղել կամ չհավաքել աղբավայրերում, բաց վիճակում,

- վաճառել թափոնների հավաքմամբ զբաղվող այլ կազմակերպությունների՝ ներառյալ արտասահմանյան զարգացած երկրների, որոնք ունեն նման ժամկետանց արևային թափոնների վերամշակման տեխնոլոգիաներ,

- ֆոտոէլեմենտներ պարունակող թափոնները հանձնել էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ հավաքող կետերին կամ կազմակերպություններին/նաև արտասահմանյան/՝ կազմակերպված թափոնների հավաքագրման նպատակով,

- թափոնները հանձնել այն երկրների կազմակերպություններին, որոնք զբաղված են արևային պանելների արտադրությամբ և որոնցից ձեռք են բերվել ֆոտոէլեկտրոնային արևային պանելները:

Գործունեության իրականացման ներդրման արժեքը կազմում է 3,5 մլն ամերիկայն դոլլար: Ներդրման արժեքի մեջ մտնում են կայանի կառուցման շինարարական և շահագործման և փակման փուլերում կատարվող, ինչպես նաև շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բոլոր ծախսերը:

18. Բնապահպանական միջոցառումների կառավարման և մոնիթորինգի պլան

Սահմանում է ՇՄԱԳ հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի՝ շինարարության և շահագործման փուլերում, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները: Այն ամփոփում է ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսում է մանրամասնություններ ազդեցությունների մեղմման միջոցառումների, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ:

Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող	Միջոցառումների արժեքը
1	**Շինարարության փուլ (4 ամիս)** **Օդային ավազան**	Օդային ավազան արտանետումները մեղմելու նպտակով նախատեսվում է. -շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, ճանապարհների ջրցան՝ ըստ անհրաժեշտության: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին, - գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով, -տարածքում նութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,	**Կապալառու՝ «Փաուեր Էներջի»ՍՊԸ**	**«Գրին Էներջի» ՍՊԸ**	**5000դրամ** **Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում**

		-շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:			
2	**Հողային ռեսուրսներ**	Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ հանվելու է հողաբուսաշերտ: Հողի բերրի շերտը հանվելու և պահվելու է համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջների:Մասնավորապես. -նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրելու են խոշոր քարերից, թփերից, կոճղերից, - հողի բերրի շերտը հանվելու է, հեռացվելու են ապարները և պահեստավորվելու է՝ առանձին, -հանված բուսահողը պահեստավորվելու է անմիջական	**Կապալառու՝ «Փաուեր էներջի»ՍՊԸ**	**«Գրին էներջի» ՍՊԸ**	**Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում**

		փորված մասերի(հորատանցքեր) հարևանությամբ, պահվելու է ծածկված վիճակում, -այն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ տարածքի բարեկարգման համար, - ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր, -շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա, հողային ռեսուրսները չաղտոտելու նպատակով, -շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու են գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:			
3	**Ջրային ռեսուրսներ**	Շինարարության ընթացքում տեխնիկական ջրի(ջրցան) պահանջը կբավարարվի ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարրաներով՝ շշերով,	**Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ**	**«Գրին Էներջի» ՍՊԸ**	**Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում**

		- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ պահանջի, - շինարարության փուլում աշխատողները կօգտվեն հարակից տարածքում գոյություն ունեցող սեպտիկ հորից:			
4	**Կենսաբազմազանություն**	Գործունեության ենթակա տարածքումկենսաբազմազանության հայտնաբերման և դրանց պահպանման անհրաշետությունից ելնելով նախատեսվում է. - մշակվելու է գործողությունների պլան, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից, - ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ ընկերությունը նախօրոք առանձնացնելու է հատուկ պահպանման գոտի՝ վերջիններիս տեղափոխելու և վերատնկելու համար:	**Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ**	**«Գրին Էներջի» ՍՊԸ**	**Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում**

5	**Թափոններ**	Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որի համար նախատեսվում է. -վտանգավոր նյութերը և մետաղական թափոնները կփոխանցվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար, -շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն կտեղափոխվեն և կտեղադրվեն համայնքի կողմից հատկացված վայրում, -շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու են կենցաղային աղբի հետ և տեղափոխվելու են աղբավայր:	**Կապալառու՝ Փաուեր էներջի**	**«Գրին էներջի» ՍՊԸ**	**Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում**
6	**Աղմուկ և թրթռում**	- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործեվելու են սարքին	**Կապալառու՝ «Փաուեր էներջի» ՍՊԸ**	**«Գրին էներջի» ՍՊԸ**	**Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում**

		վիճակում՝ աղմուկի մակարդակը նվազացնելու նպատակով, - պարբերաբար ստուգվելու և կարգավորվելու են տեխնիկական միջոցների և տրանսպորտային միջոցների շարժիչները:			
7	**Արտակարգ իրավիճակներ**	Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են. - նախատեսվող գործունեության վայրն ապահովելու է հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են, - հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների	**Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ**	**«Գրին Էներջի» ՍՊԸ**	**Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում**

		վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:			
8	**Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի անվտանգություն**	Աշխատողների աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է. -1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, -աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ.հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, -աշխատողների համար հատկացվելու են ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ), -պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի	**Կապալառու՝ «Փաուեր Էներջի» ՍՊԸ**	**«Գրին Էներջի» ՍՊԸ**	**Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում**

		«Կազմակերպություններում աշխատողների սանիտարականկենցաղային սենքերի» N 2.2..80 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները, - նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - պահպանվելու է աշխատողների շև սոցիալական հեռավորությունը, ստրտադրվելու դիմակների կրումը:			

8	**Բարեկարգում**	Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում. -շինարարական արքավորումներն ապամոնտաժվելու են, - շինարարական հրապարակները մաքրվելու են, լանդշաֆտը վերականգնվելու է:	**Կապալառու՝ Փաուեր Էներջի**	**«Գրին Էներջի» ՍՊԸ**	**Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում**
	Շահագործման փուլ	**Շ**ահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու կայանի անվտանգ շահագործման, ջրային ռեսուրսների օգտագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, ինչպես նաև թափոնների առաջացման հետ: Նախատեսվում է. -մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ մեկ աշխատողի միջոցով, -մշտական գործելու է պահակակետ, որտեղ տեղադրվելու են հեռուստացույց, մոնիտոր՝ անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար, - աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի	**«Գրին Էներջի» ՍՊԸ**	**Տեսչական մարմին**	**Ներառված է շահագործման աշխատանքների արժեքում**

		վիճակում՝ շշերով, կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու են հարակից տարածքում գոյություն ունեցող սանիտարական հանգույցից(սեպտիկ հոր), -ընկերության կողմից հնարավորինս կպահպանվեն գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները, -կկատարվեն բազմամյա խոտաբույսերով ծածկում (ցանքս), -հողի խոնավացման նպատակով՝ ջրցանման աշխատանքներ, որի համար ջուրը տարածք կտեղափոխվի ջրցան մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով, -հնարավոր յուղերի արտահոսքերը հողային ռեսուրսներ կանխելու նպատակով, դրանք հավաքվելու է համապատասխան տարաների մեջ: Հավաքված յուղը, ինչպես նաև կայանի շահագործման ընթացքում առաջացած յուղոտված լաթերը և այլ յուղային նյութեր պարունակող մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին: Տեղադրվելու է.			

		-ինվենտորների մեջ ներկառուցված հատուկWiFI swich-եր, -տեսահսկման համակարգ, 35 հատ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ: Կայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով. - ենթակայանի տարածքում՝ հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ, իսկ արևային կայանում՝ կրակմարիչներ, - առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով: Շահագործման փուլում ընդգրկվելու են 6 մարդ, երկու պահակ երկու հերթափոխով, 2 մոնիտորինգի մասնագետ, որոնք աշխատելու են հերթափոխով:			

Մոնիթորիգի (մշտադիտարկում/ պլան (շինարարության և շահագործման փուլեր)

Շինարարության փուլ (4 ամիս)	**Պարբերականությունը (ժամանակամիջոցը)**	**Մոնիթորինգի եղանակը**	**Պատասխանատու**	**Գումարը**
Շինարարական նյութերի տեղափոխման	Կախված շինարարական նյութերի տեղափոխման պահանջի անհրաժեշտությունից	Ուղեգծի և տարածքի ուսումնասիրություններ	Կապալառու կազմակերպություն	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Շինարարական նյութերի անվտանգության հսկողություն	Շինարարական նյութերի ներկրման ընթացքում	Փաստաթղթային ուսումնասիրություն	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում	Չպլանավորված ստուգումներ օրվա բոլոր ժամերին	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Հողի աղտոտումը կանխելու նպատակով	Շաբաթը մեկ անգամ	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ, հարակից տարածքներ տեսողական ուսումնասիրություն	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Օդի աղտոտումը կանխելու նպատակով, փոշի, ծուխ	Ամեն օր	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Աղմուկի մակարդակի տատանումներ	Շաբաթը մեկ անգամ	Աղմկաչափ	Կապալառու	30-հազար դրամ
Շինարարական և կենցաղային աղբի հեռացում տարածքից	Շինարարության ընթացքում	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում

Աշխատողների անվտանգության և առողջության ստուգում	Շինարարության ընթացքում	Շինարարության տարածքում, հարցումների իրականացում,	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Հանրության անվտանգություն	Շինարարության ընթացքում	Համապատասխան ցուցատախտակների տեղադրում	Կապալառու, «Գրին էներջի»ՍՊԸ	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Պատմամշակութային հուշարձաններ	Շինարարության ընթացքում	Պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, ընկերությունը դադարեցնելու է շինարարական աշխատանքերը, վերջինիս մասին հայտնելով լիազոր մարմնին (2002թ. ապրիլի 20-ի N438 որոշման համաձայն):	Կապալառու, «Գրին էներջի»ՍՊԸ	
Շահագործման փուլ				
Տարածքի բարեկարգում	Շինարարության ավարտից հետո	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու, «Գրին էներջի» ՍՊԸ	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Հողի բերրի շերտի, PH-ի ստուգում, հողի այլ	Տարին մեկ անգամ	Լաբորատոր ուսումնասիրություն	«Գրին էներջի»ՍՊԸ	20-հազար դրամ

որակական հատկությունների ստուգում				
Կենսաբազմազանության ապրելավայրերի և աճելավայրերի Փոփոխությունների վերաբերյալ հսկողություն	Տարին մեկ անգամ	Մասնագիտական ուսումնասիրություն	«Գրին էներջի»ՍՊԸ Համապատասխան մասնագետներ	100 հազար դրամ
Արտակարգ իրավիճակներ	Արտակարգ իրավիճակների դեպքում	Աշխատանքի դադարեցում	«Գրին էներջի»ՍՊԸ	
Վթարային իրավիճակների նվազեցում	Օրական ստուգումներ	Խուսափել կայանի խափանումից, սարքին պահել բոլոր սարքավորումները Սեյսմիկ վտանգի առկայության դեպքում կայանի աշխատանքի շտապ դադարեցում:	«Գրին էներջի» ՍՊԸ	Ներառված է շահագործման արժեքում
Սոցիալական	Գործունեության ընթացքում	Աշխատանք տրամադրելու առաջնահերթություն տրվելու է համայնքի բնակչությանը	Կապալառու, «Գրին էներջի»ՍՊԸ	

19. Հետնախագծային վերլուծություն

Մոնիթորինգի և միջոցառումների իրականացման արդյունքում կազմվում է հետնախագծային վերլուծության պլան, որում ներկայացվում է մոնիթորինգի արդյունքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, գնահատված հնարավոր ազդեցություններին: Որևէ բացասական շեղման կամ անհամապատասխանության դեպքում ձեռնարկողը նախատեսելու է լրացուցիչ միջոցառումներ աշխատանքների կարգաբերմանն և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված: Դրանք ևս ներառվում են հետնախագծային վերլուծության պլանում:

20. Հանրային ծանուցում և քննարկումներ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի և «Հանրային ծանուցման և քննարկումների կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 1325-Ն որոշման Բ կատեգորիայի նախատեսվող գործունեությունների համար նախատեսվում է չորս փուլով հանրային ծանուցման և քննարկումների իրականացում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրությունը համաձայն ընթացակարգի իր կարծիքը և առաջարկությունները կարող է ներկայացնել գրավոր՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Հանրային քննարկումներն իրականացվել են երեք փուլով՝ նախնական գնահատման և փորձաքննության, ինչպես նաև հիմնական գնահատման /3/գործընթացներում: Քննարկումների ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը կողմ են արտահայտվել արևային էլեկտրակայանի կառուցմանը:

Հանրային քննարկումների երրորդ փուլում հանրությանը ներկայացվել է նախագծային փաստաթուղթը և ՇՄԱԳ հաշվետվությունը: Նախատեսվող գործունեության իրականացումը հանրության կողմից հավանության է արժանացել: Հանրային լսումների արձանագրությունը՝ /Հավելված 6/:

21. Եզրահանգում.

ԲՍԿՊ-ում և մոնիթորինգի պլանում առաջարկվող բոլոր մեղմող միջոցառումները իրականացվելու դեպքում «Գրին Էներջի» արևային էլեկտրակայանը և 110ԿՎ օդային գիծը կարող է կառուցվել և շահագործվել առանց էկոլոգիական և սոցիալական միջավայրի վրա զգալի բացասական ազդեցության: Արևային էլեկտրաէներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում, թե շրջակա միջավայրի պահպանման, և թե մարդկության կայուն զարգացման համար:

Գրականություն

1. ՇՈՂԱԿԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ Հաստատված է ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի ավագանու «11» հունվարի 2018թ. N 01-Ն որոշմամբ:
2. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմեր:
3. Էներգետիկայի միջազգային գործակալությունը (IEA): Էներգախնայողության ցուցանիշներ. Քաղաքականության շրջանակ, Էդ. IEA, 2014 թ.:
4. RENEWABLES 2007 GLOBAL STATUS REPORT, Renewable Energy Policy Network for the 21st Century:
5. Մ.Վ. Գոլիցին, Ա.Մ. Գոլիցին, Ն.Վ. Պրոնինա: «Էներգիայի այլընտրանքային աղբյուրներ» Էդ. Գիտություն, Մոսկվա, 2004:
6. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունարդյունաբերական մասշտաբի արեվային ֆոտովոլտային էլեկտրակայաններ:
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ Ռ Ա Զ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն:
8. «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի:
9. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2012-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ»:
10. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմերով:
11. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2012-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ»:
12. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք էջ:
13. ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ի՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»:
14. Сборник методик по расчету въбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Гидрометеоиздат, 1986г.

Հավելված 1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքը

2014թ նոյեմբերի << 18 >>-ի
N 347-Ն հրամանի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
/նախատեսվող գործունեության/

ՏԱ --37--

<<--12-->> ------03------ 2021թ.

Սույն առաջադրանքը կազմված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթների համաձայն և հիմք է հանդիսանում նախատեսվող Ա կամ Բ կատեգորիայի գործունեության՝ փորձաքննության հիմնական փուլին ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության մշակման համար՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների.

1. Ձեռնարկողի անվանումը և հասցեն՝	«Գրին Էներջի» ՍՊԸ Ք. Երևան, Սիլիկյան թ. 4 փողոց, տ.9
2. Նախատեսվող գործունեությունը և նրա կատեգորիան՝	Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի՝ 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 3-րդ կետի գ) ենթակետի Գեղարքունիքի մարզի, Շողակաթ համայնքի, Շողակաթ բնակավայրի տարածքում՝ 19-րդ փողոց 12 հողամասում «Գրին Էներջի» արևային կայանի և 110 Կվտ օդային գծերի կառուցման նախնական գնահատման հայտը դասակարգվում է Բ կատեգորիայի:
3. Ազդակիր համայնքը (ները)	Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնք:
4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում դիտարկվող օբյեկտները և բնութագրերը նախատեսել համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13-րդ կետերի	Շրջակա միջավայրի վրա գնահատման իրականացման գործընթացում դիտարկել սույն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13-րդ կետերը: Դիտարկել նաև շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, հող, ջուր, կենդանական և բուսական աշխարհ), ֆիզիկական ազդեցություններ, աղտոտվածության

	մակարդակը (ֆոնային տվյալներ):
5. Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման հաշվետվության բովանդակությունը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը նախատեսել համաձայն Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ից 15-րդ և 3-րդ մասի 2-ից 6-րդ կետերի	Նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության բովանդակությունը և հաշվետվությանը կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերը պետք է համապատասխանեն սույն Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ից 15-րդ և 3-րդ մասի 2-ից 6-րդ կետերին: Ներառել նաև հետևյալ տեղեկատվությունը՝ համապատասխան հիմնավորումներով. -Նախատեսվող նախագծային լուծումների հնարավոր այլընտրանքային տարբերակները, ներառյալ գործունեությունից հրաժարման (զրոյական), ընտրված տարբերակի հիմնավորումը: -Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի գնահատումները (շահագործման, փակման փուլեր) 27.05.2015թ. N 764-Ն << կառավարության որոշման համաձայն: -Նախատեսվող գործունեության և տարածքում այլ գործունեությունների հետևանքների համալիր վերլուծությունը, իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր գումարային և ամբողջական ազդեցությունների գնահատումը: - Անհրաժեշտ է նախատեսվող գործունեության և նրա հարակից տարածքներում իրականացնել լրացուցիչ դաշտային ուսումնասիրություններ՝ Կարմիր գրքում գրանցված կենդանական և բուսական աշխարհի վերաբերյալ՝ համապատասխան հիմնավորումներով (մասնագիտական եզրակացություն, գրականություն և այլն, առաջնորդվելով՝ << կառավարության 29.01.2010թ. <<<< բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին>> N 71-Ն և N 72-Ն և 31.07.2014թ. N 781-Ն որոշումների պահանջներով): - Կենդանական ու բուսական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները (մասնավորապես պոպուլյացիաների

փոփոխության, կենդանիների ձվադրման և բնադրման, կենդանիների ապրելավայրերի կորստի), դրանց ուղղված նախատեսվող միջոցառումները և մշտադիտարկումը:
- Բնակավայրերից և անտառային տարածքներից հեռավորության, առկա ճանապարհների, մերձատար ուղիների, օժանդակ շինությունների տեղադիրքերի վերաբերյալ, ներկայացնել նաև սխեմատիկ և քարտեզագրական նյութեր՝ համապատասխան կոորդինատներով:
- Գործունեության իրականացման օգուտների և վնասների վերլուծությունը, արտադրվող էներգիայի սպառման հնարավորությունների, ուղղությունների, պահանջարկի հիմնավորումը:
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան նախնական համաձայնությունները, թույլտվությունները (ջրամատակարարում և ջրահեռացում, էներգամատակարարում, աղբահեռացում):
- Ներառել նախատեսվող գործունեության ընթացքում հանվող և պահեստավորվող բերրի հողի, կուտակման տեղի, զբաղեցնող մակերեսի և ծավալների, հողի նպատակային և գործառնական նշանակության, հողաբուսական շերտի պահպանման, հողի որակական փոփոխությունների, դեգրադացիայի, վտանգվող և պահեստավորվող բուսահողի պահպանության, տեղադիրքերի, ռեկուլտիվացիոն աշխատանքների, համապատասխան գծագրական նյութերի, ինչպես նաև հողերի հավանական աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումների և մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվությունը՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.11.2011թ. N 1396 որոշման պահանջներով:
- Գործունեության իրականացման արդյունքում սոցիալական գործոնների, հողի ձեռք բերման հնարավոր դեպքերի փոխհատուցման դրույթների և ծախսերի, վերաբերյալ տեղեկատվությունը:
- Լանդշաֆտի խախտման, ջրային

գոտիների, ջրահոսքերի, թափոնների հավաքման, կուտակման, պահեստավորման, նոր կանաչ գոտիների ստեղծման(տեսակի) վերաբերյալ տեղեկատվությունը:

- Արտակարգ իրավիճակների և դրանց արձագանքնմանը, կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը:

- Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և դրանց մեղմացմանն ու կանխարգելմանն ուղղված բոլոր միջոցառումները (շինարարության և շահագործման փուլ)՝ ռեկուլտիվացիա, քսայուղերի հնարավոր ներթափանցում, տրանսպորտի արտանետումների, վտանգավոր նյութերի արտահոսք և այլն:

- Նախատեսվող բոլոր միջոցառումները ներառել միջոցառումների ծրագրում, ներկայացնել դրանց իրականացման ժամանակացույցը, միջոցառումներին ուղղված ծախսերի (արդի շուկայական արժեքներին համապատասխան) գումարային գնահատումները (նաև աղյուսակային տեսքով):

- Ներառել նաև ջրային ռեսուրսների աղբյուրները, որոնք անհրաժեշտ են լինելու աշխատող անձնակազմի խմելու, կենցաղային կարիքների և տեխնիկական նպատակների համար (ջրցան, շինարարության համար բետոնախառնուրդի ստացում):

- «... իրավական հիմքերը» բաժնում ավելացնել նաև «Բնության հատուկ պահրանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշումը:

- Հաշվետվության «Կենդանական աշխարհ» բաժնում ավելացնել «Վալենտինի ժայռային մողես» տեսակը և թվարկված մյուս տեսակների անվանումները ճշգրտել՝ ավելացնելով «ժայռային» բառը:

- Ներկայացնել տարածքի երկրաբանական, մասնավորապես սեյսմիկ վտանգի և սողանքային երևույթների վտանգի մասին տվյալներ, քանի որ տարածքը գտնվում է Փամբակ-Սևան-Սյունիք ակտիվ խզվածքի

Активация Windows
Чтобы активировать Windows, перейдите в раздел "

գոտում:
- Փոքրասիական մողեսները-Parvilacerta parva Boulenger տեսակը ճշգրտել համաձայն ՀՀ կառավարության հունվարի 29-ի N71-Ն որոշման:
- «Պատմամշակութային և բնության հուշարձաններ» ենթակետում ներկայացնել բնության հուշարձանների մասին համապատասխան տեղեկատվություն:
- Ներկայացնել կլիմայական հիմնական տարրերի (ջերմաստիճան, հարաբերական խոնավություն, մթնոլորտային տեղումներ, քամու արագություն և ուղղություն, արեգակնային ճառագայթում) ամսական և տարեկան տվյալները՝ աղյուսակային տեսքով, հիմք ընդունելով «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01-2011» տեղեկագրում առկա «Շորժա» և «Սևան» օդերևութաբանական կայանների տվյալներիցը:
- Ներկայացնել տեղեկատվություն առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջների վերաբերյալ:
- Ներառել տեղեկատվություն արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկը հնարավորին չափով նվազեցնելու գործողությունների ծրագրի վերաբերյալ, որն իր մեջ կներառի անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում իրականացվող միջոցառումները և հրդեհային անվտանգությունը:
- Քանի որ, կայանի կառուցման տարածքը գտնվում է ձորակներով առատ լեռնային պայմաններում, անհրաժեշտ է հիդրոլոգիական հետազոտությունների արդյունքում գնահատել առավելագույն ելքերի առաջացման հնարավորությունները և նրանցից սպառնացող վտանգը:
- Հիմք ընդունել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական,

	գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին□:
6. Համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի եզրակացության կամ կարծիքի վերաբերյալ պահանջը՝	Առողջապահության նախարարություն:
7. Գործընթացի մասնակիցները համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի	Առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններ, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներ, Շողակաթ համայնքի շահագրգիռ հանրություն:
8. Հանրության ծանուցումը և քննարկումների իրականացումը կատարել համաձայն Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերի, 3-րդ մասի, 5-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 7-րդ և 8-րդ մասերի և <Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության 19.11.2014թ N1325-Ն որոշման	ՇՄԱԳ հաշվետվության փուլի հանրային ծանուցումը և քննարկումները իրականացնել Շողակաթ համայնքի, շահագրգիռ հանրության մասնակցությամբ, քննարկումների արձանագրությունը և տեսաձայնագրությունը կցել հաշվետվությանը:
9. Պետական տուրքի չափը՝	Համաձայն Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և 2014թ. հունիսի 21-ի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին 1-ին հոդվածի՝ Բ կատեգորիայի գնահատման հաշվետվության փորձաքննության իրականացման համար՝ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:
10. Ստացողը և հաշվի համարը՝	Ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունք՝ 900005000196:
11. Վճարման նպատակը՝	Նախատեսվող գործունեության փորձաքննության գործընթացի

Активация Windows

	իրականացման համար:
12. Փորձաքննության հիմնական փուլի սկիզբը համաձայն Օրենքի 19-րդ հոդվածի և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման	Նախատեսվող գործունեության փորձաքննության հիմնական փուլը սկսվում է տեխնիկական առաջադրանքին համապատասխան կազմված հաշվետվությունը կից փաստաթղթերով՝ էլեկտրոնային և տպագիր տարբերակները (տուրքի անդորագրի, հանրային քննարկումների արձանագրության, տեսաձայնագրության՝ կից մասնակիցների ցանկով), ձեռնարկողի կողմից լիազոր մարմնին ներկայացնելու պահից:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Գ. Գևորգյան

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի փոխտնօրեն

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի մասնագետ Ա. Վարդանյան

Հավելված 2. Հողի անալիզի եզրակացությունը Հողանմուշի լաբորատոր փորձաքննության արդյունքները

Եզրակացություն

Գեղարքունիքի մարզի, Շողակաթ համայնքի, Արտանիշ բնակավայրի վարչական տարածքում (կորդինատներ՝ 40° 30' 27.3" , 45° 19' 43.6") կատարված հողագիտական հետազոտության վերաբերյալ

Հետազոտվող տարածքի հողերը տափաստանացված կարբոնատային անտառային դարչնագույն հողեր են, որոնք ձևավորվել են կարբոնատային խճա-քարային բերվածքների վրա: Տեղամասի հողերը էրոզացված են և սակավազոր, հումուսակուտակիչ հորիզոնների հզորությունը կազմում է 0-25 սմ: Մեխանիկական կազմով միջակ կավավազային են, զգալի քարքարոտ, թե հողի մակերևույթին և թե հողային պրոֆիլում, մանր կնձկա-հատիկային ստրուկտուրայով: Հողերի pH-ը հիմնային է: Ըստ հումուսի պարունակության ապահովածությունը բավարար է, շարժուն սննդատարրերով՝ ազոտով, ֆոսֆորով և կալիումով ապահովված են թույլ:

Հողագետ, գ.գ.դ. Ա.Օ.Մարկոսյան

22.09.2020 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Գեղարքունիքի մարզ Շորժա համայնքի բաց դաշտից լաբորատոր ստուգման ներկայացված կարբոնատային հողանմուշի փորձաքննության արդյունքների վերաբերյալ

Փորձաքննության արդյունքները

Հողանմուշների №	Հողի ռեակցիան PH	Աղի պարունակությունը, %	Մեխանիկական կազմը, % < 0.01մմ	Հումուս %	Սննդանյութերի քանակը, մգ 100 գր. հողում		
					Ազոտ	Ֆոսֆոր	Կալիում
Նմուշ № 1 0-25սմ	8.22	0.15	39.45	4.40	2.24	1.04	12.0
Պետք է լինի	*≈ 7.0*	*< 0.30*	*30 - 40*	*1.5 – 2.0*	*10.0*	*6.0*	*36.0*

Ըստ հողի ռեակցիայի հողանմուշը հիմնային է: Աղերի պարունակությունը հողանմուշում նորմայի սահմանում է: Ըստ մեխանիկական կազմի հողանմուշը միջակ կավավազային տիպի է: Ըստ հումուսի պարունակության հողանմուշը բավարար հումուսային է: Ըստ ազոտի,ֆոսֆորի և կալիումի հողանմուշը թույլ է ապահովված:

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ – ի

Փոխտնօրեն / / Վ. ԴԱՎԹՅԱՆ

Կատարողներ՝
Լաբորատորիայի վարիչ՝ Միլենա Կարապետյան
Ավագ մասնագետ-ագրոքիմիկոս՝ Սոֆյա Շահունցի
Ավագ մասնագետ-ագրոքիմիկոս՝ Գոհար Բաղալյան
հեռ. 010 77 49 84

Հավելված 3. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 29 հունիսի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Շողակաթ գյուղ Շողակաթ 19-րդ փողոց 12 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի պայմնագիր 23/04/2019թ., Որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի բաժանման հատակագիծ, Առուվաճառքի պայմանագիր՝ 12.07.2019թ, Համայնքի ավագանու որոշում 05/11/2019թ. N 49, Համայնքի ղեկավարի որոշում 14/11/2019թ. N 280-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-074-0106-0091
Մակերեսի չափը (հա)՝ 9.68364
Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Էներգետիկայի
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 29062020-05-0033, գաղտնաբառ՝ VH8HYVSGIMKB

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է սպուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

Հավելված 4. Ճարտարապետահատակագծային առաջադրանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Գեղարքունիքի մարզ Շողակաթ համայնք
(մարզը, համայնքը)
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

« 03 »_____08_____2020 թ. **N 20**

Օբյեկտ_ 5 ՄՎտ հզորությամբ «Գրին Էներջի» արևային ֆոտովոլտային կայան
IV դիսկայնության աստիճան_____ _____ (կառուցում, վերակառուցում, կապիտալ նորոգում, գործառնական նշանակությունը

փոփոխում – այլն, օբյեկտի, անվանումը, հակիրճ բնորոշումը, հզորությունը)

Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք, գյուղ Շողակաթ 19-րդ փ, 12 հողամաս
նախագծային փաստաթղթերի մշակման

(նախագծման փուլերը)

Հասցեն ՀՀ Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք, գյուղ Շողակաթ 19-րդ փ, 12 հողամաս (շինարարական կամ փոստային հասցեն)

Կառուցապատող «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի անունը,ազգանունը,հասցեն, հեռախոսահամարը)

Առաջադրանքի տրամադրման հիմքը սեփականության վկայական ,տեխ.պայման ,նախագիծ

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման, քաղաքաշինական այլ գործունեության հետ առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂՈՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հողամասը գտնվում է Էներգետիկայի, տրանսպորտի ,կապի , կոմունալ ,ենթակառուցվածքների օբյեկտների

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային – գործառնական նշանակությունը

Հողամասի չափերը 9,68364 հա

(հողոմասի մակերեսը / հա) .

Հողամասի առկա վիճակը Էներգետիկ նշանակության ազատ տարածք

(ռելեֆի բնութագիրը, շենքերի առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութը – այլն) կանաչապատումը, բարեկարգումը – այլն՝ կից սխեմայով Մ 1:500)

Տրանսպորտային պայմանները _____

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները – այլն)

Ինժեներական սարքավորումներ նախագծվող և կից տարածքով անցնող ինժեներական գծեր և հաղորդակայաններ (նախագծվող կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները)

Կից հողամասեր ազատ տարածք ,ճանապարհ

(կից հողօգտագործումների անվանումը – դրանց սահմանները համաձայն ներկայացված սխեմայի)

Բնության – մշակույթի հուշարձաններ_____բացակայում են_____

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը – այլն)

Հատակագծային սահմանափակումներ_____

(տեղանքում գործող արտադրական, պաշպանվող օբյեկտների,
ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների – այլ օբյեկտների

նկատմանբ սահմանափակումները, այդ թվում սերվիտուտներ)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ճարտարապետահատակագծային պահանջներ Մշակել արևային ֆոտովոլտային կայանի կառուցման նախագիծ ,հաստատված հողամասի հատակագծի սահմանը

(ելնելով ՀՀ օրենսդրությամբ – նորմատիվատեխնիկական

_____

փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից _____

հեռավորությունը հար–ան հողակտորներից (օբյեկտներից) ըստ նորմատիվ պահանջների

թույլատրելի բարձրությունը նախագծին համապատասխան

կառուցապատման խտությունը _____-_____

(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

կառուցապատման տոկոսը , մինչև 100%

(կառուցապատվող (անջրացիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով)

Անաչապատման տոկոսը _____

(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով)

Այլ պահանջներ _____

Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների

քանդման կամ տեղափոխման պայմանները –

աշխատանքների հերթափոխությունը _____ _____

Ստորգետնյա, կիսանկուղի – առաջին հարկերի

օգտագործման պայմանները _____

Ինժեներական սարքավորումներ, ցանցեր պահանջներ նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի վերաբերյալ

ջրամատակարարում _____.

կոյուղի _____ - _____

հեռախոսային ցանց _____

տաք ջրամատակարարում _____

էլեկտրամատակարարում _____ ըստ նախագծի _____

գազամատակարարում _____

թույլ հոսաքներ _____

աղբահանում _____սեփական ուժերով_____

Տեղանքի ինժեներական նախապատրաստում _____ ըստ նախագծի ___

(ռելեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշպանության միջոցառումներ)

պահանջներ գոյություն ունեցող – նախագծվող ենթակառուց վացքների – ցանցերի ննատմամբ

Բարեկարգում ազատ տարածքների բարեկարգում և կանաչապատում , տարածքի ցանկապատում

(լանդշաֆտային ճարտարապետության վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձ–եր, ցանկապատում, գովազդ – այն)

Շինարարական նյութեր եղկաթբետոն,մետաղ , ապակի , շինարար. քար, ավազ

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

Պաշպանական կառույցներ _____

(արտակարգ իրավիճակներում մարդկանց – օբյեկտների պաշտպանության միջեցառումները)

Հակահրդեհային պահանջներ ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

Հաշվանդամների – բնակչության սակավախմբերի պաշտպանության միջոցառումներ _____

Շրջակա միջավայրի պահպանում _____

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

Շինարարության կազմակերպում _____

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության – տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ փորձաքննություն

(ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտի վրա

Միջանկյալ համաձայնեցում _____

(իրավասու մարմնի հետ կամ քաղաքաշինական խորհրդում նյութերի նախնական համաձայնեցումը)

Հասարարական քննարկումներ _____

(ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում – կարգով)

Համաձայնեցումներ _____Շողակաթի համայնքապետարան_____

(նշվում են տվյալներ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները հուշարձանների ու բնության պահպանության այլ լիազորված մարմինների հետ)

Առաջադրանքի գործողության ժամկետը _____2տարի _____

(նշվում է առաջադրանքի գործողության ժամկետը)

Այլ պայմաններ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ս.Շուշանյան

(ստորագրություն (անունը, ազգանունը)

Հավելված 5. Շողակաթ համայնքապետարանի նախնական համաձայնությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՂԱԿԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Շողակաթ համայնք, հասցե՝ գ.Շողակաթ 2-րդ փ. 1/1
հեռ. 093493792,էլ. փոստ՝ shoghakat.gegharquniq@mta.gov.am

N409
« 03 » 12 2020թ.

ԿԱՐԾԻՔ

Հանրային քննարկման էր դրված ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Շողակաթ գյուղում « ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի նախատեսվող 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման խնդիրները: Վերը նշված հարցի քննարկման արդյունքում համայնքը տալիս է իր դրական կարծիքը:

Հարգանքով
համայնքի ղեկավար՝ Ս.Շուշանյան

Հավելված 6.Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14.05.2021թ Շողակաթ համայնք

2021թ. մայիսի 14-ին ժամը 12.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ: ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով /առաջին փուլ/ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում նախատեսվող «Փաուեր Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայայացված՝ «Գրին Էներջի» ՍՊԸ-ի արևային ֆոտովոլտային արևային կայանի կառուցման գնահատման հաշվետվության վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումը:

Ելույթ ունեցան՝

Բացման խոսքով հանդես եկավ Շողակաթ համայնքի ղեկավար Ս. Շուշանյանը, որը ներկայացրեց արևակայանի կառուցման համար նախորդ հանրային քննարկումների արդյունքերը:

Թ. Նուրիջանյանը՝ <<Նովալ>>ՍՊԸ-ի ներկայացուցիչ, ներկայացրեց նախատեսվող գործունեության՝ արևակայանի կառուցման ազդեցությունները շրջակա միջավայրի՝ օդի, ջրային և հողային ռեսուրսների, կենսաբազմազանության և մարդու առողջության վրա: Տրվեց դրանց նկարագիրը, ազդեցության գնահատումները և ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումները, մոնիթորինգը: Նշեց, որ հողային ռեսուրսների առումով առաջանալու է բնահող, որը պահպանվելու է կառավարության 1404-Ն որոշման պահանաջներին համապատասխան և հետագայում օգտագործվելու է տարածքի բարեկարգման համար: Շինարարության փուլում բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ հողային ռեսուրսներն աղտոտվելուց պահպանելու նպատակով:

Կայանի շահագործման փուլում՝ տարին 1 անգամ նախատեսվում է կատարել կենսաբազմազանության մոնիթորինգ՝ բուսական և կենդանական

աշխարհի էնդեմիկ տեսակների աճելավայրերի և ապրելավայրերի հայտնաբերման նպատակով:

Ներկայացրեց, որ շահագործման փուլում, եթե արևակայանի փակման անհրաժեշտություն առաջանա, ապա կլինեն թափոններ, մասնավորապես վտանգավոր նյութեր պարունակող պանելներ և այլ նյութեր, որոնց հետագա պահպանման կամ վերամշակման նպատակով անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կառավարությունը մշակի ռազմավարություն և օրենք:

Հանրային քննարկման մասնակիցների կողմից հարցեր չհնչեցին:

Հանրային քննարկման արդյունքներն ամփոփեց համայնքի ղեկավար՝ Շուշանյանը, որը նշեց տարածքում և հանրապետությունում այլընտրանքային էներգետիկայի զարգացման, մասնավորապես արևային կայանների կառուցման անհրաժեշտությունը և կարևորությունը:

Վարող - Շողակաթ համայնքի ղեկավար
պարոն Ս. Շուշանյան

Արձանագրող – Ի. Սարկիսյան

Ձեռնարկող - «Փաուեր Էներջի» ՍՊԸ
տնօրեն՝ Ն. Փափազյան

Մասնակիցների ցանկ

«Գրին Էներջի» ՍՊ ընկերության կողմից Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի վարչական տարածքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ /3-րդ քննարկում/: 14.05.2021թ.

2/2	Անուն, Ազգանուն	Տեղեկատվություն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	093745703	
2.	[illegible]	[illegible]	077830982	
3.	[illegible]	[illegible]	077448194	
4.	[illegible]	"[illegible]" [illegible]	094520503	
5.	[illegible]	«[illegible]» [illegible]	+374-93-884625	
6.	[illegible]	[illegible]	093493792	
7.	[illegible]	գ. [illegible] ՍՊՄ	093 146499	
8.	[illegible]	[illegible]	094482288	
9.	[illegible]	[illegible]	093072766	
10.				
11.				
12.				
13.				
14.				
15.				
16.				
17.				

Հավելված 7. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատման

Արտանետվող նյութի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վi	Շգ	Փg	Տնտեսական վնասը (ՀՀ դրամ)
	Տi	գ	Քi				Ա= ՇգՓg Σ Վi Քi
Ածխածնի մոնօքսիդ	0.000025	3	0.000075	1	0.1	1000	0.0075
Ածխաջրածիններ	0.0058	3	0.0174	3	0.1	1000	5.22
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0.029	3	0.087	12.5	0.1	1000	108.75
Պինդ մասնիկներ	0.003	3	0.009	41.5	0.1	1000	37.35
Ծծմբային անհիդրիդ	0.32	3	0.96	16.5	0.1	1000	1584
Անկազմակերպ փոշու արտանետումներ	0.048	1	0.048	10	0.1	1000	48
Ընդամենը							1783.328

Հավելված 8. Օդային ավազանի աղտոտման հաշվարկները շինարարության փուլում

Արևային կայանի և օդային գծի շինարարության ընթացքում առաջացող արտանետումների հաշվարկ

Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու արտանետումներ: Դրանք առաջանում են փորման-բեռնման աշխատանքների արդյունքում՝ հիմնականում հորատող, հարթեցնող և ինքնաթափ մեքենաների: Փորման-բեռնման աշխատանքները իրականացվում՝

4 ամիս x 22 օր/ամիս x 8 ժամ/օր = 704 ժամ (88 օր):

Հաշվարկները կատարված են համաձայն “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987 մեթոդակարգի հետևյալ բանաձևի.

Q ֆ.բ.= (P1 x P2 x P3 x P4 x P5 x G x P6 x B) x 106/3600 տ/ժամ, որտեղ (նշված մեթոդակարգի աղյուսակ 1):

P1 – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, ընդունվում է 0.05

P2 – 0-50 մ/կմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0,

P4- գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4[2]

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

G – հանվող հողային զանգվածը:

Արևային կայանի շինարարության ժամանակ հանվող հողի ծավալը կկազմի՝ 248,608 մ^3, հաշվի առնելով հողային զանգվածների միջին տեսակարար կշիռը՝ 410,2 տ:

Ժամում հանվող տեղափոխվող գրունտի քանակը կկազմի՝

410, 2 տ : 704 ժամ/շին. ժամանակամիջոց = 0,58 տ/ժամ.:

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի թափման բարձրությունը, 0.6

Q ֆ.բ. = 0.05 x 0.02 x 1.0 x 0.4 x 0.5 x 0,58 x 1.0 x 0.6 x 10^6/3600 = 0.19 գ/վրկ, կամ՝

0.19 x 3600 x 704 : 10^6 = 0,048 տ/շին. ժամանակամիջոց:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործում

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում արտանետումները առաջանում են վառելիքի այրման արդյունքում: Հիմնականում օգտագործվում է դիզելային վառելիք:

Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի[3] հիման վրա:

[3]Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Core Inventory of Emissions in Europe” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում ”մեթոդոլոգիային համապատասխան”

Հաշվարկը իրականացվում է ըստ ծախսվող վառելիքի քանակի, տվյալ դեպքում դա ներկայացվում է դիզելային վառելիքով:

Ըստ նշված մեթոդակարգի, ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO_2	CH	ՑՕՄ	CO	N_2O	CO_2[4]	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Շինարարության ընթացքում շահագործվելու են հորատող, հարթեցնող, ինքնաթափ մեքենաներ: Շինարարական տեխնիկան աշխատելու է շինարարության ընթացքում մոտ 1 ամիս (26 օր, 208 ժամ):

Հաշվի առնելով ստույգ նախագծային տվյալների բացակայությունը, հաշվարկների համար օգտագործվել են փորձագիտական գնահատականների հիման վրա ընդունված ցուցանիշները, ըստ որոնց դիզվառելիքի քանակները հետևյալն են ընդունվել.

- շինարարական տեխնիկա՝ 0.08 տ/օր, ընդամենը՝ 0.08 տ/օր x 26 օր = 2,08 տ;

Ընդամենը՝ 2,08 տ:

Արտանետումների հաշվարկները ըստ շահագործվող տեխնիկայի տեսակի բերված են աղյուսակ 2-ում:

<u>Ծծմբային անհիդրիդ</u>

Ծծմբային անհիդրիդի (SO_2) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO_2-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2\Sigma ksb$, որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 2,08 տ/շինժամ

$SO_2 = 2 \times 2,08 \times 0.002 = 0.32$ տ/ շին. ժամ կամ 0.0083 գ/վրկ:

Աղյուսակ 2. Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /208ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.034	0,000025

[4] Ածխածնի երկօքսիդը, ըստ ՀՀ օրենսդրության, չի հանդիսանում վնասակար նյութ և ենթակա չէ նորմավորման, համապատասխանաբար հետագա հաշվարկներում հաշվի չի առվնել:

CH (ածխաջրածիններ)	8.403	0.0078	0.0058
NO_2 (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.422	0.039	0,029
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.004	0,003
Ծծմբային անհիդրիդ		0,0083	0,32
Անկազմակերպ փոշու արտանետում		0,19	0,048

Հավելված 9. Հողային հանույթի հաշվարկ

1. 2 տեսակի ենթակառուցվածքների տեղադրման համար հիմնասյուների ամրակցումը կիրականացվի համապատասխան հենակառուցվածքների տեղադրումից հետո, որոնց համար իրականացվող հողային աշխատանքների հաշվարկը իրականացվել է հետևյալ կերպ (52 վահանակով սեղանի հենակառուցվածքի կառուցում).

3834*0,35*0,35*0,627= մոտ 295մ^3,

որից հողի բերրի շերտը կկազմի՝ 3834*0,35*0,35*0,25=118մ^3

2. 26 վահանակով սեղանի հենակառուցվածքի կառուցում՝

240*0,35*0,35*0,75= մոտ 18մ^3,

որից հողի բերրի շերտը կկազմի՝ 240*0,35*0,35*0,25= մոտ 7,35մ^3

3. Հաստատուն հոսանքների մալուխի անցկացման համար հողային աշխատանքների արդյունքում՝

0,8*0,5*624=249,6մ^3 հողային հանույթ,

որից հողի բերրի շերտը՝ 0,8*0,25*624=124.8մ^3

4. Ցանկապատման և արտաքին լուսավորման համար՝

1*0,5*0,5*65=16,3մ^3 հողային հանույթ,

որից հողի բերրի շերտը՝ 1*0,5*0,25*65=8,125մ^3

5. Խրամուղով փոփոխական հոսանքի մալուխների անցկացման համար՝

0,325*0,8*1188=308.88
0.45*0.8*109=39.24
0.55*0.8*138=60.72
0.65*0.8*20=10.4
0.8*0.8*79=50.56
0.8*0.8*591=449.16

Ընդհանուրը՝ 918,96մ^3 հողային զանգված,

որից հողի բերրի շերտը՝ 0,325*0,25*1188= 96,525
0.45*0.25*109=39.24
0.55*0.25*138=18,975
0.65*0.25*20=3,25
0.8*0.25*79=15,8
0.8*0.25*591=118,2

Ընդհանուրը՝ 195,465մ^3 բուսահող:

6. Հողանցման կոնտուր՝ իրականացվում է հողի շերտից 0.5մ խորությամբ անցկացված 4x40մմ շերտապողպատով և 2,5մ երկարություն ունեցող 50x50x5մմ պողպատե անկյունակներով, այսպիսով.

$$0,4*0,5*2700=540մ^3,$$

Որից բերրի շերտը՝ $0,4*0,25*2700=270մ^3$

7. Սեփական տրանսֆորմատորային ենթակայանի կառուցում, որը զբաղեցնելու է (40x14)մ մակերես, իսկ ենթակայանի կառուցման նպատակով հենասյուների տեղադրման արդյունքում հողային հանույթի ծավալը կկազմի՝

$$1,5*1,5*1,5*21=70.875մ^3$$

որից բերրի հողը՝ $1.5*1.5*0.25*21=11.8125մ^3$

8. Յուղընդունիչ հորի կառուցման համար հողային հանույթի ծավալը կկազմի՝

$$4.4*3.1*2.5=34,1մ^3,$$

որից հողի բերրի շերտը՝ $4,4*3,1*0,25=3,41մ^3$: